10-16 ԱՊՐԻԼ 2026 ՈՒՐԲԱԹ 013(5881)

# Ազգ

Azg

ISSN: 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Ապրիլի 9-ին Լիբանանում սգո ազգային օր էր

Պետական բոլոր հաստատությունները փակ էին: Երկրի առողջապահության նախարարության վերջին տվյալներով՝ապրիլի 8-ին Իսրայելի ռմբակոծությունների հետեւանքով զոհվել է առնվազն 203 մարդ, վիրավորվել՝ ավելի քան 1000-ը: Իրան- ԱՄՆ հրադադարի վերաբերյալ պայմանավորվածությունը խախտեց Նեթանյահուն՝ «Հեզբոլլահին» ոչնչացնելու գերնպատակ պատրվակը խաղարկելով, որն արժանացավ միջազգային՝ այդ թվում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար **Գուտերեշի** քննադատությանը: ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատար **Թյուրքը** հայտարարեց՝ հրադադարից մի քանի ժամ անց նման արյունահեղությունն անըմբռնելի է: ԵՄ գերագույն ներկայացուցիչ **Կալասը** զգուշացրեց՝ Իսրայելի ինքնապաշտպանության իրավունքը չի արդարացնում զանգվածային ավերածությունները: Մեծ Բրիտանիայի ԱԳ նախարար **Քուփերը** պահանջեց, որ Լիբանանը ներառվի հրադադարի մեջ: Մինչեւ ե՞րբ է Իսրայելը շարունակելու ջարդարարությունները:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա

## Հա դե…

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Չգիտենք, թե Իրան-ԱՄՆ հրադադարը որքա՞ն կտեւի, կխախտվի՞արդյոք այն, քանի որ Իսրայելն է կարծես անհամաձայն դրան իր գործողություններով: Մյուս կողմից էլ՝ զինադադարները հաճախ խաղաղություն չեն նշանակում, այլ հնարավորություն են տալիս վերականգնելու ուժերը, վերազինվելու եւ նոր թափով պատերազմը շարունակելու (Աստված չանի): Այնպես որ մենք եւս մի պահ կտրվենք բոլորիս համար վտանգ ներկայացնող կոնֆլիկտից ու պահ ունենանք կենտրոնանալու մեր ներքաղաքական կյանքի վրա, որը մտել է երեւակման փուլ, քանի որ արդեն հայտնի են ընտրություններին մասնակցելու մտադրություն հայտնած ուժերի մեծ մասի նախընտրական ցուցակների անցողիկ համարվող առաջին տասնյակները:

Մեր հրապարակումը պատրաստելու պահին՝ երեկոյան գումարվում էր նաեւ **Գագիկ Ծառուկյանի** շուրջ համախմբված ուժերի համագումարը, եւ այս ուժերի ցուցակն էլ ժամերի ընթացքում հասանելի է լինելու, չնայած Գագիկ Ծառուկյանի վերջին հարցազրույցներից մեկի տոնայնությունից եւ նրա մամլո խոսնակ **Իվետա Տոնոյանի** էջում «Մայր Հայաստան» կուսակցության հետ հանդիպման ժամանակ համատեղ օրակարգի եւ համագործակցության ակնարկից ու սեղանին դրված մրգերի բազմազանությունից, Ծառուկյանին աջակցության մասին մի շարք այլ միավորների հայտարարություններից դատելով՝ կարելի է այդ ցուցակի մասին կանխատեսումներ անել նաեւ մինչեւ համաժողովը, այնուամենայնիվ ենթադրելով, որ նրա ցուցակն ամենահետաքրքրականն ու ամենաինտրիգայինն է լինելու: Բայց մենք դա չենք անի՝ նշելով միայն, որ այն պահին, երբ մեր հրապարակումն արդեն պատրաստել էինք՝ Ծառուկյանի շքեղ հաստատություններից մեկում սկսվեց «Բարգավաճ Հայաստան» կուսակցության համագումարն ու նրա «Առաջարկ Հայաստանին» ծրագրի շնորհանդեսը:

⇨5

## Պատերազմի հաղթանակը

### (Իրանի դեմ պատերազմի օրագրից)

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Իրանագետ

Հինավուրց իրանական քաղաքակրթությանը նետված մարտահրավերի վերջին րոպեներին Պակիստանի միջնորդությամբ հակամարտող կողմերի միջեւ երկշաբաթյա հրադադարի մասին պայմանավորվածություն ձեռք բերվեց: Թեհրանի տեսանկյունից, կարեւորագույն հանձնառությունը ԱՄՆ նախագահի **Դոնալդ Թրամփի** բնորոշմամբ՝ «անիծյալ» Հորմուզի նեղուցը 14 օրով բաց պահելն է, իսկ Վաշինգտոնինը՝ առ ժամանակ իրանական հինավուրց քաղաքակրթությանը չդիպչելու ու «քարե դար» չվերադարձնելու խոստումը:




Պատերազմի հետեւանքով ավերված երկիրը վերականգնելու համար ժամանակ շահելու պատրվակով Իսրայելն էլ «մեծահոգաբար» միացավ ԱՄՆ-ի այդ որոշմանը՝ առայժմ իր գերակա խնդիրը համարելով Լիբանանը ոչնչացնելու ծրագիրը:

Այս օրերին Իրանի դեմ ԱՄՆ-ի եւ Իսրայելի նախաձեռնած պատերազմի ընթացքը բնորոշող գլխավոր խնդիրներից մեկը «հաղթանակ» եւ «պարտություն» հասկացությունների տարբեր ընկալումներն են: Մինչեւ հրադադարի մասին պայմանավորվածություն ձեռք բերելը, Վաշինգտոնի համար հաղթանակը դարձել էր Իրանի ենթակառուցվածքների եւ կենսական նշանակության օբյեկտների ոչնչացումը: Մինչդեռ Իրանի տեսանկյունից հաղթանակը սեփական կամքով պայքարի շարունակությունն էր:

Պատերազմի ելքի այս հակասական ընկալումներն ակնհայտ էին ԱՄՆ նախագահի Դոնալդ Թրամփին հանդես գալ հրապարակային հայտարարություններով: Սպիտակ տան հռետորաբանության եւ ռազմավարության մեջ, կարծես, նկատվում էր որոշակի շրջադարձ: Թրամփն այլեւս չէր խոսում «բռնապետական» ռեժիմից դեպի ազատ եւ բարգավաճ Իրան անցում կատարելու անհրաժեշտության մասին, այլ քննարկում էր երկիրը լիակատար ոչնչացման ենթարկելու հնարավորությունը: Դա էր պատճառը, որ Դոնալդ Թրամփն ապրիլի 6-ին իր Truth Social-ի միջոցով, առանց հաշվի առնելու տարրական էթիկան, իրանցիներին «խելագար» ու «սրիկա» անվանելով, զգուշացրել էր. «Երեքշաբթի օրն Իրանում լինելու է եւ էլեկտրակայանի, եւ կամրջի օր, բոլորը միասին: Դեռ նման բան չի եղել: Բացեք անիծյալ նեղուցը, խելագար սրիկաներ, թե չէ կայրեք դժոխքում»:

Վերջին հայտարարություններից մեկում Թրամփն նաեւ նշել էր, որ զանգվածային ռմբակոծությունների միջոցով մտադիր է Իրանը վերադարձնել «քարե դար»: Այս հռետորաբանությունը վկայում էր ամերիկյան մոտեցումների կտրուկ փոփոխության մասին, որի պատճառներից մեկը Իրանի ցուցաբերած աննախադեպ դիմադրությունն էր ԱՄՆ-Իսրայել տանդեմի նկատմամբ:

Թեհրանի հաստատակամությունն իր ռազմավարական նպատակներին հասնելու հարցում Վաշինգտոնին, ըստ ամենայնի, մղել էր առավել կոշտ քայլերի: Իրանի դիմադրողականությունը կոտրելու համար, ԱՄՆ-ը կարծես այլընտրանք չէր տեսնում, քան երկրի կենսական ենթակառուցվածքների համակարգված ոչնչացումն ու մի ամբողջ քաղաքակրթության բնաջնջումը:

⇨2

## Աննա Հեսս- Սարգսյան. «Իրանի դասը Հայաստանի համար՝ հույսդ քո վրա պիտի դնես»

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

*«Ազգում» համառոտ շարադրել էինք, որ մարտի 26-ին շվեյցարական «Նոյե ցյուրխեր ցայթունգի» թղթակից Յանա Քեհլը հասել էր Մեղրի, զրուցել բնակիչների հետ, լայնածավալ ռեպորտաժում ամփոփել հատկապես TRIPP-ին առնչվող տրամադրությունները: Որ ճանապարհով էլ Մեղրի հասած լիներ թղթակիցը, անհնար էր չնկատել Հյուսիս- հարավի եռուն շինարարությունը, որի Քաջարան-Ագարակ հատվածում դեռ 2025-ի սեպտեմբերի վերջին Մեղրի մեր այցի ժամանակ նկատեցինք իրանական շինընկերությունների ներգրավվածությունը: TRIPP-ի, Հյուսիս-հարավի, Իրանի դեմ ԱՄՆ-Իսրայել պատերազմի դասերի մասին ենք տորեւ զրուցում միջազգայնագետ, հակամարտությունների կարգավորման, բանակցային գործընթացների փորձագետ Աննա Հեսս -Սարգսյանի հետ:*

**-ԱՄՆ - Իրան պատերազմը երկշաբաթյա հրադադարի փուլում է: Կարո՞ղ ենք ենթադրել, թե Իրանի տարածաշրջանային դիրքերն ամրապնդվում են, ինչն ազդեցություն է ունենալու նաեւ TRIPP-ի վրա:**

- Հարցականները շատ են, անորոշությունների դաշտում ենք՝ այս հրադադար կոչվածը շարունակական կլինի՞, կողմերից ո՞ր մեկը հավանական սաբոտաժի կենթարկի, այս զինադադարը կդիմակայի՞, կյանք կունենա՞, թե՞ պատերազմական փուլը կշարունակվի: Մանավանդ Լիբանանի մասով արդեն սաբոտաժ արեց Իսրայելը: Բայց մի բան հստակ է՝ գոնե կարճաժամկետ, TRIPP-ի վրա ազդեցությունը բացասական է՝ հազարումի ակնհայտ պատճառներով: Առաջին՝ թե՛ ԱՄՆ-ի, թե՛ Իրանի համար TRIPP-ն իրենց առաջնահերթությունը չէ: Երկրորդ՝ Իրանն ավելի զգայուն եւ նյարդային է լինելու իր սահմաների մերձավորությամբ ԱՄՆ ներկայության վերաբերյալ: Երրորդ՝ ԱՄՆ-ի համար էլ այս պահին բացարձակ առաջնահերթ չէ, թե TRIPP-ն ինչ պիտի լինի: Բայց նաեւ՝ հետաքրքիր պարադոքսալ կարեւորություն է ստանում TRIPP-ը Միացյալ Նահանգների համար՝ Իրանը շրջանցելու կամ առեւտրային ճանապարհներն Իրանից կտրելու առումով, եւ որքան կառուցելն ավելի մեծ կարեւորություն է ստանում, նույնքան ավելի այն դժվարանում է: Միջնաժամկետ դժվար է հասկանալ ի՞նչ կլինի, բայց կարեւոր է նաեւ, թե ՌԴ-ն այս՝ վերահաստատվելու հնարավորությունն ինչպես է տեսնելու: Որովհետեւ հեղհեղուկ վիճակում իրադրությունը փոխվում է՝ տարածաշրջանային խաղացողների հետաքրքրությունները, հնարավորությունները նույնը չեն մնում:

⇨6

# Ուժերի համաշխարհային դասավորությունը եւ մենք

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

## Ըստ միջազգային մամուլի հրապարակումների

Որպես իրանյան հակամարտության արդյունք, Եվրասիայում էներգետիկ ռեսուրսների փոխադրման ցամաքային ուղիների ռազմավարական արժեքը զգալիորեն աճել է, գրում է ամերիկյան «Վաշինգտոն փոստ» թերթը: Հորմուզի նեղուցի փակումը, որով անցնում է նավթի համաշխարհային ծովային մատակարարումների մոտավորապես մեկ հինգերորդը, բացահայտել է ծովային նեղ անցուղիների խոցելիությունը, հանգեցնելով նշված աճին:

Միացյալ Նահանգները, նշում է թերթի սյունակագիրը, պետք է ճանաչի այս տեղաշարժը եւ մշակի այնպիսի քաղաքականություն, որը կկանխի որեւէ առանձին տերության գերիշխանությունը Եվրասիական մայրցամաքում: Առաջին քայլը պետք է լինի այն երկրները որոշելը, որոնց առանցքային դեր է հատկացվում այդ նպատակին հասնելու գործում: Ինչպես ԱՄՆ նախագահական ընտրությունների արդյունքը կախված է մի քանի տատանվող նահանգներից, եվրասիական միջին տերությունների նոր խումբը դառնում է որոշիչ գործոն մեծ տերությունների՝ Ռուսաստանի, Չինաստանի եւ Միացյալ Նահանգների միջեւ մրցակցության մեջ: Որպես այդպիսի պետություններ, հոդվածում նշվում են Հայաստանը, Ադրբեջանը, Հունգարիան, Ղազախստանը, Մոնղոլիան, Պակիստանը, Թուրքիան եւ Ուզբեկստանը:

Այս ութ երկրները, ինչպես նկատվում է հոդվածում, գտնվում են Ասիան եւ Եվրոպան կապող հիմնական տրանսպորտային միջանցքների վրա: Դրանցից շատերը հարուստ են նավթով, գազով կամ կարեւորագույն հանքանյութերով՝ ռեսուրսներ, որոնք մեծ նշանակություն ունեն աշխարհատնտեսական մրցակցության ժամանակակից դարաշրջանում:

Ուկրաինայում Ռուսաստանի ռազմական գործողությունը թուլացրել է Մոսկվայի ազդեցությունը՝ տարածք բացելով Չինաստանի ազդեցության ընդլայնման համար՝ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության միջոցով: Պեկինը Կենտրոնական Ասիան ավելի է իր հետ կապել խողովակաշարերի եւ երկաթուղիների միջոցով: Սակայն տարածաշրջանի քիչ երկրներ են պատրաստ իրենց կախվածությունը Ռուսաստանից փոխարինել Չինաստանից կախվածությամբ: Այս տատանումը հստակ հնարավորություն է ստեղծում Միացյալ Նահանգների համար, հատկապես Թրամփի օրոք, որն էներգետիկ անվտանգությունը, կարեւորագույն հանքանյութերը եւ ռազմավարական աշխարհագրական դիրքը բարձր է դասում ժողովրդավարական ցուցանիշներից:



Ըստ այդմ, Թրամփի վարչակազմի եվրասիական քաղաքականությունը, լինի նպատակադրված, թե հանգամանքների բերումով, լավ համապատասխանում է «տատանվող պետությունների» հայեցակարգին: Այս հայեցակարգի վրա է կառուցված «Թրամփի երթուղի միջազգային խաղաղության եւ բարգավաճման համար» (TRIPP) «միջանցքը» (չակերտը մերն է - Գ. Մ.): Կապելով Հայաստանը եւ Ադրբեջանը՝ ԹՐԻՓՓ-ը ստեղծում է ԱՄՆ-ի կառավարմամբ հանգույց, որը կապում է Կենտրոնական Ասիան Թուրքիայի եւ Եվրոպայի հետ՝ շրջանցելով Ռուսաստանը:

### «Թրամփի ուղին» եւ Ռուսաստանը

Օրեր առաջ պատասխանելով վարչապետ **Փաշինյանի** մոսկովյան այցի եւ ՌԴ նախագահ **Վլադիմիր Պուտինի** հետ հանդիպման վերաբերյալ «Բի-բի-սի»-ի ռուսական ծառայության բազմաթիվ հարցերի, ռուս հայտնի անկախ լրագրող եւ քաղաքագետ **Կիրիլ Կրիվոշեեւն** անդրադարձել է նաեւ «Թրամփի ուղուն»՝ դրա նկատմամբ Ռուսաստանի վերաբերմունքի համատեքստում:

«Թրամփի ուղին», ի մասնավորի հիշեցրել է նա, պետք է անցնի անմիջապես Իրանի հետ սահմանի երկայնքով, քանի որ թե՛ ցարական, թե՛ խորհրդային ժամանակներում այս հատվածում ռելսեր կային, եւ դրանք անցնում էին Արաքս գետի երկայնքով: Ու այստեղ նախատեսում են, ըստ էության, վերականգնել խորհրդային ժամանակներում գոյություն ունեցած ռելսերը: Բացի Ադրբեջանի եւ Հայաստանի համար ունեցած նշանակությունից, ինչպես նկատվում է, սա մի տեսակ նոր մետաքսի ճանապարհ է Չինաստանից Եվրոպա՝ Կենտրոնական Ասիայով, Հարավային Կովկասով եւ Թուրքիայով: Ռուսաստանը նախապես պնդում էր, թե այդ ճանապարհի վերահսկողությունը համենայն դեպս պետք է իրականացնեն ռուս սահմանապահները: Բայց **Դոնալդ Թրամփը** 2025 թվականին վերադարձավ Սպիտակ տուն եւ... այս ճանապարհի մասին հանկարծ առաջացած խոսակցությունները դարձան օգոստոսի 8-ի համաձայնություն: Իսկ ամեն ինչ սկսվել էր Թուրքիայում ԱՄՆ դեսպանից. նա էր նախաձեռնել նախագծի շուրջ քննարկումները...

Ճիշտ է, նկատում է քաղաքագետը, Թրամփը շատ արագ կորցնում է հետաքրքրությունը ինչի նկատմամբ ասես, ու հիմա նա ակնհայտորեն հետաքրքրված է այլ երկրներով ու հակամարտություններով: Եվ նախ, լիովին պարզ չէ, թե ինչպես են ԱՄՆ-Իրան հարաբերությունները նպաստելու Իրանի սահմանի երկայնքով Ամերիկայի կողմից վերահսկվող որեւէ ճանապարհի կառուցմանը: Ու երկրորդ, արդյո՞ք Թրամփին դա ընդհանրապես պետք է հիմա: Հնարավոր է՝ նա կկորցնի հետաքրքրությունը եւ նախագիծը դրանով կմարի:

Իր մի հոդվածում այս խնդրին անդրադարձել է նաեւ թուրքական «Ջումհուրիեթ» թերթը: Չնայած ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի ղեկավարների ներկա ընդհանուր ոչ վատ հարաբերություններին, Թրամփի Ամերիկայի եւ Ռուսաստանի շահերը, նշում է թուրքական լրատվամիջոցը, բախվում են, մասնավորապես, Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում: Իրենք նախկինում գրել էին Ռուսաստանում եւ Իրանում առկա մտահոգությունների մասին «Թրամփի միջանցք» նախագծի վերաբերյալ: «Հաշվի առնելով, որ Արեւմուտքի համար Կովկասի հիմնական նշանակությունը Կենտրոնական Ասիայի դարպասի նրա դիրքն է,- ասվում է հրապարակման մեջ,- մենք տեսնում ենք, որ «Թրամփի միջանցքը» մարտահրավեր է նետում ռուսական ազդեցությանը ոչ միայն Կովկասում, այլեւ Կենտրոնական Ասիայում»:

### «Հայաստանի ընտրությունները՝ Արեւմուտքի եւ Ռուսաստանի բախման ասպարեզ»

Սա «Ջումհուրիեթ»-ի հիշյալ հոդվածի երկրորդ վերնագիրն է, իսկ առաջինն է «Հայաստանը բանալի է դեպի Կովկաս եւ Կենտրոնական Ասիա»:

Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանը հայտնվել է աշխարհաքաղաքական պայքարի կենտրոնում, գրում է պարբերականի հեղինակը: ԱՄՆ-ը փորձում է իրականացնել Ադրբեջանը Կենտրոնական Ասիայի հետ միավորելու նախագիծ: Մյուս կողմից, Մոսկվայի ազդեցությունը տարածաշրջանում կարող է հեշտությամբ ուժեղանալ (Հայաստանի) ամառային ընտրություններից հետո:

ԱՄՆ նախագահի կողմից Կովկաս-Կենտրոնական Ասիա առանցքում կառուցվող շղթայի ամենաթույլ օղակը, ըստ հոդվածագրի, Հայաստանն է: Ի տարբերություն Ադրբեջանի, այստեղի կառավարությունն աստիճանաբար կորցնում է ժողովրդի աջակցությունը, մինչդեռ Ռուսաստանի ազդեցությունը հասարակության վրա, անկախ ամեն ինչից, մնում է ուժեղ: Թերթի հեղինակը նույնիսկ մեծ է համարում հավանականությունը, որ ռուսամետ ընդդիմությունը կհաղթի հունիսի 7-ի ընտրություններում: Եվ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, գիտակցելով, որ ընտրություններից առաջ չի կարողանա բացահայտորեն հանդես գալ Ռուսաստանի դեմ, ապրիլի 1-ին այցելեց Մոսկվա, ջերմ հանդիպում ունեցավ Վլադիմիր Պուտինի հետ: Սակայն, դատելով նաեւ ռուսական արձագանքներից, նա, մասնավորապես, չի կարողացել հայկական ընդդիմությանը զրկել Ռուսաստանի աջակցությունից: Մյուս կողմից, ԵՄ ղեկավարությունը հայտարարել է, որ փորձագետներ կուղարկի Հայաստան՝ ընտրությունների ժամանակ հնարավոր «հիբրիդային սպառնալիքներին» հակազդելու համար: Վերջին տարիներին ԵՄ-ն, ինչպես նշվում է, Արեւելյան Եվրոպայի տարբեր երկրներին ռուսամետ թեկնածուների հաղթանակի դեպքում մեղադրել է ընտրակեղծիքների մեջ: Հետեւաբար կարծվում է, որ Հայաստանում հունիսին կայանալիք ընտրությունները կդառնան կոշտ բախման ասպարեզ ոչ միայն տեղական թեկնածուների, այլ նաեւ Արեւմուտքի ու Ռուսաստանի միջեւ:

Հունիսի 7-ին Հայաստանում կայանալիք ընտրությունների ելքը, ամփոփում է լրատվամիջոցը, հանգուցային նշանակություն կունենա Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում Ռուսաստանի ազդեցության համար:

# Պատերազմի հաղթանակը

⇨1 Բայցեւայնպես, Թրամփը մի պահ նաեւ հիշելով կրոնապետության դեմ պայքարելու իրանցիներին տրված խոստումը, երկիրը «քարե դար» վերադարձնելու սպառնալիքներն արդարացնելու համար ասել էր. «Նրանք (իրանցիները) հանուն ազատության պատրաստ են ընդառաջ գնալ նման տառապանքների»:

Միեւնույն ժամանակ, Դոնալդ Թրամփը պնդում էր, որ Իրանի ռազմածովային ուժերն ու օդուժը ոչնչացվել են, իսկ ռադարային համակարգերը շարքից դուրս են եկել: Նա փորձում էր ներքին լսարանին համոզել, թե Իրանը զրկվել է հրթիռներ արտադրելու եւ կիրառելու հնարավորությունից:

Այնուամենայնիվ, քաղաքական մեկնաբանները չեն շտապում այս պատերազմը դասել Միացյալ Նահանգների ռազմավարական հաջողությունների շարքին: Որոշ վերլուծաբաններ նույնիսկ խոսում են Իրանի որոշակի առավելությունների մասին՝ դրանք պայմանավորելով ոչ թե ռազմական հաղթանակով, այլ պատերազմի մի քանի կարեւոր հետեւանքներով: Դրանց թվում են՝ երկրում արմատականների իշխանության ամրապնդումը եւ Հորմուզի նեղուցի շուրջ Իրանի ազդեցության մեծացումը: Նշենք, որ մինչեւ ռազմական գործողությունները Իրանը չէր վերահսկում Հորմուզի նեղուցը:

Բացի այդ, պատերազմի ընթացքում Իրանում արձանագրվել է իշխանությունների շուրջ հասարակության աննախադեպ համախմբում: Սա ստիպել է հակառակորդներին վերանայել իրենց մոտեցումները եւ որոնել ներքին ապակայունացման նոր մեխանիզմներ:

Պատերազմը նաեւ որոշ չափով հակասության մեջ է դրել Իրանը որպես «բռնատիրական պետություն» ներկայացնելու պնդումները՝ ի ցույց դնելով համակարգված կառավարման եւ ինստիտուցիոնալ կայունության փաստը: Նույնիսկ Գերագույն հոգեւոր առաջնորդի ֆիզիկական բացակայությունը չի հանգեցրել իշխանական հիերարխիայի փլուզմանը:

Իրանի ղեկավարության տեսանկյունից պարտված չլինելու գլխավոր նախապայմանը դիմադրությունն է: Ներկայիս իշխանությունները շարունակում են դիմադրությունը դիտարկել որպես հաղթանակին հասնելու գլխավոր ուղի:

Այս մոտեցումը հասկանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել Իրանի դարավոր մշակութային եւ կրոնական առանձնահատկությունները: Նման պայմաններում պատերազմը, նույնիսկ նյութական մեծ կորուստների պարագայում, ընկալվում է որպես պատվի հարց եւ տեղավորվում է որոշակի ռացիոնալ տրամաբանության շրջանակում:

Հենց այս պատճառով էլ Իրանի պատրաստակամությունը՝ շարունակել պայքարը, անգամ մեծ կորուստների գնով, անակնկալ էր նրա հակառակորդների համար:

Պատերազմի սկզբում ԱՄՆ-ի եւ Իսրայելի գլխավոր նպատակը կարծես, Իրանի կրոնապետական համակարգի փոփոխությունն էր: Ենթադրվում էր, որ ռազմական ճնշումը կհանգեցնի թեոկրատիայի փլուզմանը:

Սակայն այդ սպասումների չիրականացման ֆոնին ձեւավորվեց նոր մոտեցում. եթե հնարավոր չէ փոխել համակարգը, ապա անհրաժեշտ է առավելագույնս թուլացնել նրա կարողությունները:

Այս ռազմավարական փոփոխության արդյունքում Իրանի դեմ գործող ուժերն իրենց առջեւ խնդիր են դրել թիրախավորել երկրի կենսական ենթակառուցվածքները՝ արդյունաբերությունը եւ էներգետիկան: Սա փաստում է, որ արտաքին ճնշումներով Իրանի վարքագիծը փոխելու փորձերը ցանկալի արդյունք չեն տվել:

Անշուշտ, այս պատերազմը եւս, ինչպես նմանատիպ հակամարտությունները, վաղ թե ուշ կավարտվի: Սակայն նույնիսկ դրա ավարտից հետո «հաղթանակ» եւ «պարտություն» հասկացությունների շուրջ բանավեճերը չեն դադարի:

Միեւնույն ժամանակ, մեկ իրողություն կմնա անփոփոխ. Այս անգամ էլ ինչպես միշտ, հաղթելու է պատերազմը եւ պարտվելու է նահանջող կողմը:

# Հայաստանի Ազգային Ժողովի ընտրութիւններուն ընդառաջ

## *Ամբողջ Հայ ժողովուրդը պարտաւոր է անվարան առնչուիլ՝ ուղեցոյց ունենալով առանձնապէս՝ ազգային գերագոյն շահերը*



**Դոկտ. ԱՐՇԱՒԻՐ ԿԷՕՆՃԵԱՆ**

Պետական բարձրագոյն՝ Member of the Order of Canada շքանշանակիր

***Սոյն յօդուածով կը շեշտուի, թէ Հայ Սփիւռքը անբաժան մասնիկն է հայ ազգին: Որպէս այդ՝ ան պարտի այսուհետեւ, նուազագոյնը՝ դիտորդներով, պաշտօնապէս ներկայ եւ մասնակից ըլլալ Հայաստանի մէջ շուտով կայանալիք համապետական ընտրութիւններուն:***

### ՀամաՀայկական պատասխանատուութիւն

Յառաջիկայ Յունիսի 7-ին տեղի պիտի ունենան Հայաստանի Ազգային Ժողովի հերթական ընդհանուր ընտրութիւնները: Արդէն իսկ, Հայաստանի ներքին կեանքին մէջ, ընտրարշաւը մեծ թափ ստացած է:

Այս ընտրութիւնները, որոնք ինքնաբերաբար պիտի որոշեն Հայաստանի քաղաքական յաջորդ ղեկավարութիւնը եւ վարչապետը, ներկայ աննախադէպ ազգային եւ միջազգային խառն ու խրթին քաղաքական պայմաններուն բերմամբ բացառաբար ճակատագրական եւ որոշիչ բնոյթ ունին, որովհետեւ անոնց արդիւնքէն կախեալ է ոչ միայն Հայաստանի, այլ նաեւ հիմնականին մէջ յաջորդող բազմաթիւ տարիներուն ընթացքին մեր ամբողջ ազգին մօտիկ ապագային ունենալիք նկարագիրը եւ անոր երկար տարիներու ճակատագիրը, տառացիօրէն գոյութենական իմաստով:

Այս բոլորը նկատի առնելով է, որ այսօր Հայ ժողովուրդը ամբողջութեամբ, այսինքն՝ բնականաբար առաջին հերթին Հայաստանի քաղաքացիները, եւ սակայն ոչ միայն իրենք, այլ նաեւ անժխտելիօրէն Հայ ժողովուրդի կառոյցը ամբողջացնող հսկայական Սփիւռքը, պարտաւոր են իրենք զիրենք նկատել մեծ պատասխանատուութեան մը կրող, իրենց ունեցած ամբողջ կարողութիւններով ազդելու այդ ընտրութեանց արդիւնքին վրայ, իրենց տրամադրելի բոլոր ճանապարհներով, ուղեցոյց ունենալով առանձնապէս՝ ազգային գերագոյն շահերը:

### Հայ մամուլի դերը

Ընտրութիւններուն ընդառաջ կ՚ակնկալուի, որ Հայ մամուլը պիտի այլեւս ամէն օր աւելի կեդրոնացած՝ վերլուծումներով եւ լուսաբանութիւններով, գիտակից Հայ հասարակութեան ուշադրութիւնը ուղղէ ընտրութիւններուն բերմամբ արծարծուող հրատապ հարցերուն վրայ:

Արդէն իսկ շատ երկար է լուրջ հիմնահարցերուն շարքը, այս առիթով ձեւ առած քաղաքական տարբեր խմբաւորումներու կողմէ արծարծուած՝ ներքին ճակատին՝ այսինքն Հայաստանի մէջ,: Սակայն այս անգամ այդ բոլորին մասին ներկայ այս յօդուածը, այլ ստեղծուած ընդհանուր «աղմուկին» մէջ բոլորովին մոռցուած հսկայական Հայ Սփիւռքին գոյութիւնը յիշեցնելու եւ անոր բացակայութիւնը սրբագրելու հիմնահարցն է մեր նպատակը:

### Հայաստան-Սփիւռք փոխշաղկապուածութեան կարեւորութիւնը

Հիմնահարցերու շարքին մէջ խիստ կարեւոր տեղ կը գրաւէ Հայ Սփիւռք եւ Հայաստան իրարու նկատմամբ ունեցած փոխադարձ պարտականութեանց եւ այլ իրաւունքներու հիմնական հարցը, որ կարելի է ըսել, թէ Հայոց Ցեղասպանութենէն ի վեր, անցած 111 տարիներուն ընթացքին, բացի ժամանակաւոր կարգ մը ցանցառ նախաձեռնութիւններէ, դժբախտաբար ոչ մէկ ժամանակ առարկան դարձած է համազգային առումով հանգամանաւոր, եւ հիմնական քննարկման, վերլուծման եւ վերջնականապէս գործադրելի եզրայանգման:

Այս օրերուն, աւելի եւս մտահոգիչ է մանաւանդ Հայաստանի ներկայ իշխանութեանց՝ Սփիւռքի նկատմամբ որդեգրած՝ ոչ միայն բացայայտ գաղջ, այլեւ ուղղակի արհամարհական կեցուածքը: Ահա թէ ինչու այս տողերուն հեղինակը, այս յօդուածով, յստակօրէն որպէս ազգային լուրջ քննարկման արժանի նիւթ՝ Հայաստանի ընտրութիւններուն ընդառաջ, շեշտակի կերպով կ՚արծարծէ Սփիւռք-Հայաստան փոխադարձ պարտականութեանց եւ իրաւունքներու սահմանման անխուսափելի հիմնահարցը:

### Հայաստանի իշխանութիւններու ձեւաւորման ի խնդիր Սփիւռքին վերաբերող դերը

Որոշ է թէ, այս յօդուածով սկսած եւ ակնկալելի անոր հետեւելիք այլ արտայայտութիւններով, այս հարցին բազմակողմանի քննարկման, եւ անկէ բխած համազգային տարողութեամբ գործադրելի տրամաբանական եզրակացութիւնները պիտի մանաւանդ ճշդեն նաեւ, այսուհետեւ Հայաստանի մէջ կայանալիք ընտրութիւններուն մէջ եւ անոնց նկատմամբ Սփիւռքին վերաբերող դերը եւ անվիճելի բաժինը, անկախաբար եկող-գացող իշխանութիւններէն եւ օրուան վարչապետերուն կամ ղեկավարներուն քմահաճոյքէն կամ բարի կամեցողութենէն:

Որոշ է նաեւ, թէ այս հիմնական հարցին քննարկման ընթացքին, ի բացակայութիւն պետական եւ համազգային ճանաչում վայելող վերահսկիչ կառոյցի մը, կարծիքներու ազատ արտայայտման սկզբունքի գործադրութիւնն է, որ պիտի առաջնորդէ այլազան եւ վստահաբար նաեւ յաճախ զիրար հակասող կարծիքներու արտայայտումը: Ինչ կը վերաբերի այս տողերու հեղինակին, համաձայն իր արդէն իսկ հետեւողականութեամբ հաստատուած սովորութեան, ան կը հաստատէ, թէ իր քննարկումը կարելիութեանց առաւելագոյն չափով հիմնուած է պատմական եւ գործնական անվիճելի տուեալներու ծիրին մէջ եւ առանձնապէս տրամաբանական եւ դժուար վիճելի պատճառաբանութեանց վրայ:

***«Կարեւորագոյն տուեալը, որ հիմը կը հանդիսանայ մեր մնացեալ բոլոր պատճառաբանուած հետեւութիւններուն ա՛յն է, թէ Հայ Սփիւռքը անբաժանելի մասնիկն է Հայ ազգին»***

### Հայկական Սփիւռքի առանձնայատկութիւնը

Ծանօթ իրականութիւն է, որ բազմաթիւ այլ ազգեր եւս ունին իրենց ազատ կամքով մայր հողը թողած, երկրագունդի տարբեր վայրերու մէջ հաստատուած մասնիկներ: Հետեւաբար բոլոր այդ ազգերը, իրենք եւս ունին փոքր կամ երբեմն ալ աւելի բազմամարդ սփիւռքներ: Սակայն այսպիսիները չեն կրնար, եւ ոչ ալ յաւակնութիւնը ունին իրենք իրենց հօրենական ազգութեան մաս նկատել: Անոնք առաւելագոյնը, կ՚արտայայտուին ըսելով, թէ իրենք պարզապէս ծագումով կը պատկանին որոշ ազգութեան մը:

Հիմնովին տարբեր է միլիոններ հաշուող Հայկական սփիւռքի խոշոր մասսան կազմողներուն պարագան, որուն թիւը, առաջին հերթին, բազմաթիւ անգամներով կը գերազանցէ նոյնինքն մայր Հայաստանի սահմաններէն ներս ապրող Հայութեան թիւը, եւ որ նաեւ կոպտօրէն եւ համամարդկային ոճրագործութեան մը հետեւանքով է միայն, որ մէկ օրէն միւսը, թողելով իր հօրենական տունը, գործը, դպրոցները, կառոյցները, տեղահանուած է միայն ստոյգ մահէն ազատելու համար, եւ սկիզբը միայն առժամաբար բնակութիւն հաստատած է աշխարհի տարբեր երկիրներու մէջ: Միլիոններու հասնող հայերու այս համախմբումը, որ այդ ողբերգական հանգրուանին եւ այնուհետեւ կրեց **Հայ Սփիւռք որակումը, կասկածէ վեր է թէ, առաջին իսկ օրերէն, այդ հանգրուանին՝ անվիճելիօրէն անբաժանելի եւ հարազատ մէկ խոշոր մասն էր Հայ ազգին:**

### Յետ-Ցեղասպանութեան Սփիւռքի անցած ուղին

Մեր միտքերու տրամաբանական զարգացումը կատարելու համար հիմա քայլ առ քայլ հետեւինք Սփիւռք կոչուած այդ հաւաքականութեան, Հայոց Ցեղասպանութենէն ետք մինչեւ այսօրուան մեր օրերը, 111 տարիներու ընթացքին, անցած յաջորդական հանգրուաններուն:

Վերացական ըլլալով հանդերձ, եթէ վայրկեան մը որպէս պարզ մտամարզանք, շարունակենք մեր տրամաբանութեան շղթան եւ ենթադրենք, թէ այդ Ցեղասպանութեան դժոխային օրերուն գոյութիւն ունենար իր անունը արդարացնող Հայկական պետականութիւն մը, պատասխանատուութեան գիտակցութիւն ունեցող անոր օրուան իշխանութիւնները եւ ղեկավարները անպայմանօրէն, իրենց առաջնահերթ եւ անմիջական պատասխանատուութիւնը պիտի նկատէին ձեռնարկել ազգահաւաքի, եւ ազգապահպանման տարբեր արտակարգ օժանդակութեան հսկայական աշխատանքի մը, ջանալով կարելի առաւելագոյն չափով արդարացնել, **անվիճելիօրէն իրենց պարտականութիւնը հանդիսացող** պաշտպանութիւնը եւ հոգատարութիւնը Հայ ազգին հարազատ եւ անբաժանելի՝այդ մէկ խոշոր հատուածին:

Գիտենք սակայն, թէ այդ օրերուն չկային ո՛չ այդպիսի պետականութիւն եւ ո՛չ ալ համապատասխան իշխանութիւններ:

Ամբողջական ոչնչացումէ ինք եւս մազապուրծ՝ այդ օրերու Խորհրդային Հայաստանը դժուարագոյն պայմաններու մէջ՝ եւ աւելին, համաշխարհային երկրորդ պատերազմի դժնդակ տարիները եւս ապրելով, երբ տասնամեակներէ ետք հազիւ թէ կարողացաւ, բոլորովին անկատար, տանջալից առաջին քանի մը քայլեր առնել, տեւականօրէն իր պատասխանատուութիւնը հանդիսացող Սփիւռքի իր զաւակները հաւաքելու համար՝ ներգաղթի մեծ մասամբ անյաջող ծրագիրը գործադրելով:

Մեր նպատակը չէ, եւ այս մէկ յօդուածով բնականաբար կարելի ալ չէ աւելի ընդլայնել Հայաստանի հանրապետութեան յաջորդական իշխանութեանց՝ այդ օրերէն ետք եւս, մինչեւ նոյնիսկ մեր օրերը այսօր, Հայ Սփիւռքին ազգային հոգածութիւն տալու աշխատանքին **գործնապէս** աննշան, գրեթէ ոչինչի հասնող, տարողութեան լուրջ վերլուծումը կատարել: Ապահով կերպով սակայն կարելի է այդ աշխատանքին տարողութիւնը ընդհանուր առմամբ, դժբախտաբար որակել հետեւեալ այս երկու բառերով՝ **գրեթէ ոչինչ**:

Կանխելու համար կատարուած այս ծանրակշիռ հաստատման առնչութեամբ մակերեսային շուտիկութեամբ ակնկալելի որեւէ քննադատութիւն, պէտք է աւելցնեմ, թէ այս տողերուն հեղինակը ուղղակի անձնական եւ շատ երկար փորձառութեամբ շատ մօտէն ծանօթ է, թէ 1946-ի ներգաղթի շարժման, թէ աւելի վերջ 1960-ական տարիներուն անոր փոքր չափով շարունակման բոլոր մանրամասնութեանց. նոյնպէս շատ մօտէն ծանօթ է այդ տարիներուն եւ աւելի ետք Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէին գնահատելի որոշակի ջանքերուն, ինչպէս նաեւ սփիւռքահայ ուսուցիչներու եւ պատանիներու յատուկ տարբեր ամառնային ծրագիրներու գործադրութեան մանրամասնութեանց: Նոյնպէս ան մօտէն ծանօթ է աւելի վերջ, Սփիւռքի նկատմամբ գուցէ ամենալուրջը նկատուելու արժանի, վերանկախացած Հայաստանի տարիներուն մէկ կարճ շրջանին ընթացքին ստեղծուած Սփիւռքի նախարարութեան գնահատելի աշխատանքներուն տարողութեան, եւ վերջապէս նաեւ ներկայ իշխանութեանց կողմէ, Սփիւռքի նախարարութեան բաւականին յաջող ձեռնարկը դժբախտաբար դադրեցնելով, փոխարէնը այսպէս կոչուած Սփիւռքի յանձնակատարի մը ստեղծման բոլորովին անպտուղ եւ անիմաստ, լրջօրէն քննադատելի բոլոր պարագաները:

⇨4

# Հայաստանի Ազգային ժողովի ընտրութիւններուն ընդառաջ

⇨5 Անբաւարար պետական հոգածութիւն

Ներկայ յօդուածին կեդրոնական նպատակն է, գուցէ առաջին անգամ ըլլալով, բացայայտ եւ բարձրաձայն յայտարարել թէ դժբախտաբար յստակ, որոշ եւ անվիճելի է թէ Հայաստանի հանրապետութեան կողմէ նախաձեռնուած վերոյիշեալ աշխատանքներուն բոլորին ընդհանուր գումարը համարեա ոչինչ չափով իսկ չէր կրնար բաւարարել աշխարհածաւալ Հայ Սփիւռքին անհրաժեշտ՝ նոյնքան հսկայածաւալ պահանջները, որ անժխտելիօրէն իրենց պարտականութիւնն էր անցնող 111 տարիներուն ընթացքին, որպէսզի մեծ կարողականութիւն եւ տարողութիւն ունեցող այդ հսկայական հաւաքականութիւնը նուազագոյն չափով իսկ պահէր եւ մինչեւ այսօր ունենար իր ներկայի թէեւ ոչ կատարեալ, սակայն պատկառելի ազգային նկարագիրը:

Այսօր կարեւորութեամբ կը մատնանշենք եւ բարձրաձայն կը յայտարարենք, թէ փոխարէնը, այդ բոլորը սքանչելի կերպով կատարուեցաւ այդ նոյնինքն անպաշտպան մնացած եւ **Հայ Սփիւռք** անունը կրող հաւաքականութեան կողմէ, առանձնապէս անհատական զոհաբերութիւններով, ու յաճախ բոլորովին կամաւոր՝ այլապէս միլիոններ արժողութեամբ աշխատանքով:

Առարկայական անվիճելի հետեւանքը այս իրականութեան այն է, թէ անցեալի եւ թէ ներկայի եւ նաեւ նախատեսելի մօտ ապագայի Հայկական պետութիւնը, եւ զայն ներկայացնող բոլոր իշխանութիւնները, բոլորը, նիւթապէս եւ բարոյապէս, ուղղակիօրէն, գործնականօրէն եւ անվիճելիօրէն պարտական են իրենց փոխարէն ազգային հոգատարութիւն հայթայթող Սփիւռքի այդ բոլոր պատասխանատուներուն:

Այս վերջիններուն մաս կը կազմեն տարիներու ընթացքին անհաշիւ զոհողութիւններով ծնունդ առած եւ մինչեւ այսօր գործող բարեսիրական, կրթական, մշակութային, քաղաքական եւ անշահախնդրօրէն գործող բոլոր այլ կազմակերպութիւններ, ինչպէս նաեւ առանձին անհատներ: Այդ կազմակերպութեանց մէջ անցեալին գործած են եւ այսօր եւս բոլորովին կամաւոր եւ անհատոյց կերպով կը գործեն երբեմն համեմատաբար համեստ, բայց նաեւ իրենց տարբեր մասնագիտութեանց մէջ բարձրագոյն արհեստավարժական (professional) պատրաստութիւն. կարողութիւն եւ դիրք ունեցող իրաւաբաններ, գիտնականներ, մեծագոյն յաջողութեանց հասած գործարարներ, որոնք դիւրաւ կրնան իրենց նոյն այդ թանկագին ժամերը յատկացնել հաճոյքի եւ կամ խիստ շահաբեր բազմաթիւ այլ աշխատանքներու:



hաւաքականութեան:

Այո, Սփիւռքը ինքն է որ ամբողջովին կը փոխարինէ Հայաստանի իշխանութեանց պարտականութիւնը հանդիսացող եւ սակայն անոնց անկարողութեան պատճառաւ բացթողուած հսկայական պատասխանատուութիւնը:

## Ամսականաւոր պաշտօնեայի եւ նուիրեալ կամաւորի տարբերութիւնը

Հայաստանի իշխանութիւններուն ուշադրութեան կը յանձնենք այս առիթով, թէ իրենք պարտին համեստաբար գիտակցիլ, թէ Հայաստանի մէջ աւելի թէ նուազ յաջողութեամբ, եւ սակայն, շռայլուած պետական այլազան միջոցներով իրենց ստացած մեծ պարգեւավճարումներով կատարած աշխատանքները սփիւռքահայը ընդհանրապէս կը կատարէ բոլորովին անհատոյց, առաւել եւս իր անձնական ունեցուածքէն բաժին մը նուիրելով այլազան կրթական, մշակութային, բարեսիրական եւ յօգուտ իր համայնքին, աշխատանքներուն իրականացման համար:

Կը մատնանշենք թէ Սփիւռքի մէջ այս բոլորը 111 երկար տարիներէ ի վեր կը կատարուին մեծ դժուարութեամբ եւ տակաւին շօշափելի յաջողութեամբ, միայն եւ միայն պահպանելու համար ազգային Հայ նկարագիրը , այս յօդուածով ահա յատուկ լուսարձակի տակ դրուած, Սփիւռքի մեծ հաւաքականութեան:

## Սփիւռքը՝ Հայաստանի Ռազմավարական Հարստութեան Աղբիւր

Այս հանգրուանին պէ՞տք է նաեւ վերյիշեցնել Հայաստանի իշխանութեանց, թէ Հայ Սփիւռքի գիտակից մասը, ուղղակիօրէն հարստութեան առարկայական մեծ աղբիւր է Հայաստանի համար, պայմանաւ անշուշտ, որ օրուան իշխանութիւնները կարողութիւնը եւ գիտակցութիւնը ունենան շինիչ կերպով օգտագործելու այդ հարստութիւնը...: Գուցէ այստեղ պէտք է յիշեցնել թէ շատ յաճախ, մանաւանդ մօտ անցեալին, արդարօրէն մեծ հպարտութեամբ է որ Հայաստանի մէջ կը լսուէին հանրային լորձնաշուրթն յայտարարութիւններ, ուր կ՚ըսուէր, թէ «Եթէ Ատրպէյճանը հարուստ է իր քարիւղով, Հայաստանը աւելի եւս հարուստ է իր Սփիւռքով...»:

Բնականաբար, ինչպէս Ատրպէյճանի քարիւղին օգտակարութիւնը կը յայտնուի միայն երբ ան արտահանուի իր ընդերքէն, նոյնպէս ալ Սփիւռքահայութեան օգտակարութիւնը կը յայտնուի մանաւանդ երբ Հայաստանի իշխանութիւնները գիտակցին իրենց պարտականութեան, ջանք եւ հոգատարութիւն տածեն, եւ կազմակերպուած ձեւերով Հայրենիքին մօտեցնեն, փոխանակ ընդհակառակը վանելու, արժանաւոր սփիւռքահայերը:

## Եզրակացութիւն

Վերջապէս, հիմնուելով այս յօդուածին մէջ տրուած պատճառաբանուած առարկայական տուեալներուն վրայ, ահա այժմ կը հասնինք ներկայ գրութեան անմիջական եւ գլխաւոր նպատակին եւ, Հայաստանի ԱԺ-ի յառաջիկայ ընտրութիւններուն ընդառաջ, մեր խօսքը կ՚ուղղենք Հայաստանի այսօրուան իշխանութեանց:

**Բազմամիլիոն թիւ ներկայացնող լայնատարած գիտակից Հայ Սփիւռքը ոչ թէ տեսականօրէն, այլ՝ առարկայականօրէն անբաժան մասն է Հայ Ազգին: Հետեւաբար որպէս Հայ ազգի միջազգային մակարդակով ընդունուած օրինական միակ հեղինակութիւն, դուք որոշապէս պարտական էք անոր, եւ նաեւ պարտաւոր էք գուրգուրանքով ընդունիլ զայն իր այդ իսկ հանգամանքով, որպէս անբաժանելի մէկ մասը Հայ Ազգին:**

**Հետեւաբար Հայաստանի իշխանութիւնները բնականօրէն պարտաւոր են յառաջիկայ ԱԺ-ին ընտրութիւններու մասնակցութեան պաշտօնական ձեւ եւ առիթ ստեղծել Սփիւռքահայ ներկայացուցիչներուն համար:**

Անգամ մը եւս, կանխելու համար ակնկալելի անմիջական եւ դիւրին առարկութիւնները, թէ ընդհանուր կազմակերպչական կառոյց չունեցող Սփիւռքը ինչպէ՞ս է որ պիտի նշանակէ իր այդ ներկայացուցիչները, գործնական եւ տրամաբանականօրէն կը մատնանշենք, թէ հերթը նախ կը վերաբերի Հայաստանի իշխանութեանց:

Մեր պահանջն է, որ նկատի առնելով այս յօդուածին մինչեւ այստեղ ներկայացուցած հիմնական տրամաբանական պատճառաբանութիւնը, Հայաստանի իշխանութիւնները առաջին հերթին **պաշտօնապէս ընդունին ընտրութիւններուն Սփիւռքին մասնակցութեան սկզբունքը**: Անկէ յետոյ է որ միայն Սփիւռքի տարբեր պատասխանատու շրջանակներու պարտականութիւնը պիտի ըլլայ գտնել, ընդհանուրին կարելի չափով բաւարարող ձեւը եւ նշանակելու իր ներկայացուցիչները:

Մինչ այդ, եւ առայժմ կրկին առաջքը առնելով ակնկալելի քաղաքացիական պատկանելիութեան օրէնսդրական խրթին արգելքները, որպէս անվիճելիօրէն գործադրելի տարբերակ՝ կ՚առաջարկենք որ Սփիւռքի վերոյիշեալ ներկայացուցիչներուն այս անգամ **պաշտօնապէս տրուի ընտրութիւնները վերահսկող դիտորդի հանգամանք:**

Գլխաւոր եւ որպէս անմիջապէս գործադրութեան ենթակայ ամփոփ եզրակացութիւն, երբ Հայաստանի ընտրութեանց ներկայ գտնուելու կը հրաւիրուին այլազան, նոյնիսկ եւրոպացի կամ այլ պաշտօնական դիտորդ ներկայացուցիչներ, կասկածէ վեր է, թէ Հայ ազգին անբաժան մասնիկը հանդիսացող սփիւռքահայութիւնը, առաջնահերթութեամբ իրաւունք ունի ինք եւս, գուցէ այս անգամ նուազագոյնը, **«պաշտօնական դիտորդի»** հանգամանքով, ներկայ ըլլալու եւ այդպէսով պաշտօնապէս մասնակից ըլլալու այդ ընտրութեանց:

# Թամարա Խանումի

## 120-ամյակը նշվեց Տաշքենդում




Ուզբեկական Nuz.uz կայքէջը տեղեկացնում է, որ մարտի 29-ին Տաշքենդի

Ալիշեր Նավոյիի անվան պետական ակադեմիական Մեծ թատրոնում տեղի է ունեցել համերգ՝ նվիրված հայազգի ուզբեկական արտիստուհի **Թամարա Խանումի** ծննդյան 120-ամյակին: Թամարա Խանումը (Թամարա Արտեմի Պետրոսյան, 1906-1991) պատմության մեջ մտել է որպես երգչուհի, պարուհի, բեմադրիչ եւ դերասանուհի, առաջիններից մեկը՝ որն ուզբեկական ժողովրդական պարը բերել է բեմ, կատարել տարբեր ժողովուրդների երգեր ու պարեր՝ ձեւավորելով այնպիսի երկացանկ, որտեղ միաձուլվում էին երաժշտությունը, շարժումը եւ ազգային ավանդույթը:

Այդ երեկո թատրոնը լցված է եղել առանձնահատուկ տրամադրությամբ: Համերգից առաջ թատրոնի նախասրահում բացվել է Թամարա Խանումի կյանքին եւ ստեղծագործությանը նվիրված ցուցահանդես՝ լուսանկարներ, բեմական զգեստներ, փաստաթղթեր: Համերգի ծրագիրը կառուցված է եղել որպես ճանապարհորդություն նրա ստեղծագործական ժառանգության միջով: Հանդես են եկել «Բահոր», «Բերյոզկա», «Շոդլիկ» համույթները, Նավոյիի անվան Մեծ թատրոնի, Պետական ֆիլհարմոնիայի ու կոնսերվատորիայի երիտասարդական երգչախմբի եւ Տաջիկստանի պետական ֆիլհարմոնիայի մենակատարները: Կատարվել են ուզբեկական երգեր եւ պարեր, նաեւ տարբեր ժողովուրդների մշակույթն արտացոլող համարներ՝ ճապոնական «Սակուրա» երգից մինչեւ հայկական (գուսան Աշոտի «Սարի սիրուն յարը») եւ տաջիկական երգերը:

Համերգն անցել է առանց ընդմիջման եւ դահլիճի ուշադրությունը կենտրոնացած է պահել մինչեւ վերջ: Ըստ կայքէջի՝ անհետացել է «հոբելյանական» զգացողությունը, եւ Թամարա Խանումը ներկայացված է եղել ոչ թե որպես հիշողություն, այլ որպես կենդանի ներկայություն:

Հիշենք, որ չնայած Ուզբեկստանում ծնված եւ ողջ կյանքն այնտեղ ապրած լինելու հանգամանքին, Թամարա Խանումը եղել է ազգային շեշտված նկարագրով հայուհի: Հայտնի է, որ 1988 թվականի Հայաստանի ավերիչ երկրաշարժից հետո արտիստուհին իր ողջ կարողությունը նվիրաբերել է տուժածներին՝ ոչինչ չթողնելով իր դուստրերին եւ նրանց ընտանիքներին:

Ա. Բ.

# Գաֆեսճյան կենտրոնում հանդես կգա ֆրանսահայ օպերային երգչուհի Մարի Մյուլլեր-Սիմոնյանը



Այսօր, ապրիլի 10-ի երեկոյան Գաֆեսճյան կենտրոնում կբացվի դասական երաժշտության «Երգեր եւ մեղեդիներ» համերգաշարը, որի մենակատարն է ֆրանսահայ երիտասարդ օպերային երգչուհի **Մարի Մյուլլեր-Սիմոնյանը**: Հնչելու են Շտրաուսի,Ռավելի, Պուլենկի ստեղծագործություններից, նվագակցելու է դաշնակահարուհի **Հասմիկ Անտոնյանը**:

Կատարվելու են վոկալ արվեստի խորապես զգայական եւ փիլիսոփայական ստեղծագործություններ, որոնք հազվադեպ են հնչում Հայաստանում, այնպես որ համերգն արվեստասերի համար կդառնա այդ ստեղծագործությունների հետ հաղորդակցվելու բացառիկ հնարավորություն՝ մանավանդ շնորհալի սոպրանոյի կատարմամբ:

Համերգին հնչելիք Մորիս Ռավելի «Շեհերազադեն» արեւելյան երազանքի եւ ֆրանսիական իմպրեսիոնիզմի նուրբ համադրություն է՝ լի գունային հարստությամբ, պատկերային նրբությամբ եւ զգայական խորությամբ: Լուի Արագոնի բանաստեղծությունների հիման վրա Ֆրանսիս Պուլենկի երկու ստեղծագործությունները սիրո, կարոտի եւ զգացմունքների հուզական եւ ճշմարիտ փոխանցումն են երաժշտությամբ, որոնք երգչուհին կնվիրի հանդիսատեսին: Երեկոյի ավարտին կհնչի Պուչինիի ամենահայտնի ստեղծագործություններից մեկը՝հատված օպերայից, որն իր նրբագեղությամբ ու թեթեւությամբ երեկոն կդարձնի հիշվող:

Օպերային արվեստի եւ դասական երաժշտության սիրահարների համար իրոք հրաշալի երեկո է սպասվում Գաֆեսճյանում:

Հիշեցնենք, թե ով է մենակատարը, որին ներկայացնելու առիթ «**Ազգն**» ունեցել է, երբ փարիզահայ երգչուհին 2024 թվականին արժանացել էր Վիեննայի հեղինակավոր Բեթհովենի միջազգային մրցույթի առաջին մրցանակին: Մարի Մյուլլեր-Սիմոնյանը ֆրանսահայ օպերային երգչուհի է, որ արդեն իսկ ստեղծագործական հաջողություններ է ունեցել, 2023 թվականից նա նաեւ Երեւանի ազգային օպերայի երիտասարդ արտիստների ծրագրի մենակատար է՝ **Լեւոն Ջավադյանի** ղեկավարությամբ:




Խոստումնալից երգչուհին համարվում է նոր սերնդի նշանակալից ձայներից մեկն օպերային արվեստում:

Մարի Մյուլլեր- Սիմոնյանը մեծացել է պահանջկոտ երաժշտական միջավայրում՝ նա փարիզաբնակ երգեհոնահարուհի **Նարինե Սիմոնյանի** դուստրն է, երգեհոնի ուսուցումը սկսել է Բուլոն Բիրնկուրի տարածաշրջանային կոնսերվատորիայում, այնտեղ ուսանել 10 տարի, զուգահեռաբար Փարիզի կոնսերվատորիայում դասական երգեցողություն ուսումնասիրելով:

Ինը տարեկանից նա աշխատել է հայտնի մեցցո-սոպրանո **Գիմես Լորանի** ղեկավարությամբ: 2019 թվականին ստացել է երգեհոնահարի դիպլոմ՝ գերազանցությամբ, նաեւ արժանացել Հայաստանի մշակույթի նախարարության հատուկ մրցանակին:

Մարի Մյուլլեր-Սիմոնյանը նաեւ լավ դաշնակահարուհի է,: Իր առաջին օպերային դերը՝ Ամուրի կերպարը Գլյուկի «Օրփեոս եւ Եվրիդիկե» օպերայում ստացել է ինը տարեկանում, այնուհետեւ մի շարք կարեւոր դերերգեր ունեցել, իսկ վերջին դերը նա ստանձնել է Երեւանի օպերայում, 2025 թվականին՝ Մյուզետան Պուչինիի «Բոհեմ» օպերայում:

Արժե երգչուհու արվեստին ծանոթանալ այս անգամ Գաֆեսճյան կենտրոնում, ապրիլի 10-ի երեկոյան:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Հա դե...

⇨1 Բայց կարելի է հիմա էլ ասել, որ ընդհանուր առմամբ մեծ ինտրիգ չկա ընտրապայքարին մասնակցության մտադրություն հայտնած ուժերի առումով, նրանց մեծ մասի առաջին քսանյակ-երեսնյակները հայտնի են եւ համալրված Հայաստանում վերջին տարիներին ու անցյալում էլ լավ գործարկված սկզբունքով, այն է՝ բոլորում էլ ընդգրկված են կա՛մ հանրահավաքներին իրենց կողքին կանգնածները, որոնք տեղավորվել են հայ կյանքի քաղաքական առանցքը դարձած դիմակայության, միմյանց հանդեպ թշնամանք գեներացրած անձերի շուրջ, եւ այդ ցուցակներում դժվար է գտնել թայֆայականության ելակետից դուրս, իրապես երկրի մարտահրավերները լուծելու ունակ եւ տվյալ քաղաքական ուժերին ու նրանց առաջնորդերին հավատարմություն չհայտնած այն պրոֆեսիոնալներին, որոնք կան մեր հանրության մեջ եւ նրանց թիվը փոքր չէ:

Այդ ցուցակներն ուսումնասիրելով ակնառու կարելի է տեսնել մեր քաղդասի նեղմտությունը, երկրի խնդիրներին ընդհանրական հայացքով չնայելը, կուսակցությունների առաջնորդներին սրբադասողներին (նույնիսկ լինեն նրանք անձեռնհաս ու անգրագետ) առաջ բերելու հակումը, տոհմախմբային մտածողությունից ձերբազատվել չկարողանալը:

Դա երեւում է ե՛ւ ընդդիմադիր, ե՛ւ իշխանական կուսակցությունների նախընտրական ցուցակներում, որոնցում շատ քիչ, գրեթե անհնար բացվածք կա հանրության ավելի լայն ներուժը ներգրավելու՝ համամասնական կարգի ընձեռած հնարավորությունը կյանքի կոչելով:

Դիցուք վերցնենք իշխանական կուսակցության ցուցակները, որոնք կազմվել են իբր դեմոկրատական սկզբունքն ապահովող ներքին քվեարկության արդյունքում: Լավ զննելով այնտեղ հայտնված մարդկանց անունները, նրանց գործունեությունն ու կենսագրությունն ուսումնասիրելով՝ հասկանում ես, որ դա ընդամենը հավատարիմների մի համախումբ է, կազմված առաջնորդին նվիրվածության սկզբունքով, այնտեղ չի ներդրված ռոտացիա հասկացությունը, երբ ութ տարի երեւացած, մարդկանց հոգնեցրած պաշտոնյաները նորից հայտնվելու են խորհրդարանում եւ կառավարության մեջ, ամենեւին չնպատակադրելով ողջ երկիրը ղեկավարելու հավակնություն դրսեւորող ուժի թեկնածուների մեջ ընդգրկելու բանիմաց, ունակ, բայց ոչ սեփական շրջանակի բազմաթիվ անհատներին: Եւ բնական է, որ խորհրդարանում եւ կառավարությունում հաճախ մարդիկ են հայտնվել ու հայտնվելու են, որոնցից նրանց հարց ուղղող լրագրողներն անգամ (վստահ ենք՝ այլ ոլորտային խմբեր եւս) ավելի խելացի, բանիմաց եւ ունակ են:

Ի՞նչ է ստացվում՝ հանրության խելացի բավական մեծ շերտին պիտի կառավարեն կուսակցական, նաեւ հաճախ ոչ այնքան գրագետ մարդիկ. բացառությունները հաշիվ չեն:

Նույն բանն է ընդդիմության մեջ, ու մեզ մոտ, փաստորեն, ավելի դեմոկրատականի երեւույթն ունեցող համամասնական կարգը վերածվել է թայֆաբազական կարգի: Ու այդ պատճառով նորից ու նորից առաջ են մղվում հանրության հարգանքը վաղուց չվայելող, մարդկանց հակակրանքին արժանացած նույնունույն դեմքերը:

Տիկնայք ու պարոնայք, ո՞նց անենք, որ, ձեր թայֆաներից դուրս մնացած բազմաթիվ օժտված, օրենսդրական աշխատանքի եւ կառավարման համար պիտանի, բանիմաց մասնագետներին եւս բանի տեղ դնեք:

Բոլոր դեպքերում արժե նշել արդեն հայտնի ցուցակների առաջին երեք դեմքերին՝ նկատի առնելով, որ ցուցակները գլխավորողները վարչապետի թեկնածու են:

«**Ուժեղ Հայաստան**»՝ Նարեկ կարապետյան, Արամ Վարդեւանյան, Գոհար Մելոյան:

Նշենք, որ «Ուժեղ Հայաստան» դաշինքի առաջին համարը, փաստորեն, նախկին ՀՀԿ-ական **Կարեն Կարապետյանի** որդին է, ցուցակն ուսումնասիրողներն այնտեղ կգտնեն ՀԿԿ-ին մերձ անձանց (ՀՀԿ-ն էլ ո՞նց չի մասնակցում ընտրություններին):

«**Հայաստան**» դաշինք՝ Ռոբերտ Քոչարյան, Իշխան Սաղաթելյան, Աննա Գրիգորյան:

**ՔՊ**՝ Նիկոլ Փաշինյան, Սուրեն Պապիկյան, Գեւորգ Պապոյան:

Ավելի ավարտուն եւ ԿԸՀ-ում գրանցված բոլոր կուսակցությունների նախընտրական ցուցակների մասին կխոսենք ապրիլի 13-ից հետո, երբ ԿՀ-ն կգրանցի հայտերը:

Ընդդիմադիր երեք գլխավոր ուժերն էլ, գաղտնիք չկա, ռուսամետ են, չնայած օրերս Ծառուկյանն ասում էր, թե պետք չէ այդպիսի բաժանումներ անել: **Մարիա Զախարովային** ասենք, որ հենց մեկ օր առաջ թեեւ ասում էր՝Ռուսաստանի ղեկավարությունը չի միջամտում հայկական ներքաղաքական կյանքին, բայց անմիջապես էլ միջամտեց, թե բա՝ խոսքը միջամտության մասին չէ, այլ պարզապես շահագրգռվածության, որ բոլոր քաղաքացիները կարողանան մասնակցել ընտրություններին հավասար իրավունքներով: Եւ մատնանշեց մեր Ընտրական օրենսգրքի վերջին նոր փոփոխությունը, որով չի թույլատրում անձնանուն օգտագործել դաշինքների անվան մեջ (**Սամվել Կարապետյանի** անունը նկատի ունենք- **Մ.Խ.**), դա համարելով ընդդիմության իրավունքների սահմանափակում:

Դե իսկ **Ռոբերտ Քոչարյանն** էլ այստեղից սատար կանգնեց Ռուսաստանին, թե Փաշինյանն Ղարաբաղի հարցում իր սխալները փորձում է բարդել Ռուսաստանի նախագահի վրա: Որ Ղարաբաղի անկախությունը չճանաչեց ոչ մի երկիր՝ համաձայն ենք, բայց որ Հայաստանի ոչ մի իշխանություն, այդ թվում՝ Քոչարյանի իշխանությունը, չճանաչեց Արցախի անկախությունը, այդ մասին ոչ մի խոսք: Սրբադասել Ռուսաստանի նախագահին,Ղարաբաղը փրկելու նրա կամքից խոսել՝ սա ռուսամետություն չէ՞, որը, խոստովանենք, այլեւս չի կաշառում մեր ժողովրդին, նա այս տարիներին առարկայորեն տեսել է ով՝ով է:

ՔՊ-ի մասին միանշանակ պնդել, որ նա արեւմտամետ ուժ է, էլի հնարավոր չէ, քանի որ վերջին շրջանում նրա ղեկավարները տարբեր բաներ են ասում, **Փաշինյան-Պուտին** վերջին հանդիպումը, դրանից հետո հնչած իրարամերժ տեսակետները թույլ չեն տա այդպիսի պնդումներ: Փաշինյանը հենց մեկ օր առաջ էր ասում. թե Ռուսաստանի թիկունքում եւ ի հեճուկս նրա Հայաստանի իշխանությունը ոչինչ չի անում, ու արդեն հունիսի երկրորդ կեսին (փաստորեն ընտրություններից հետո) բարձր մակարդակի նոր հանդիպում է նախատեսված Պուտինի հետ, երեւի միջպետական կոնստրուկտիվ տրանսֆորմացիան (Փաշինյանի ձեւակերպումն է) քննարկելու:

Չնայած արժի այստեղ մեջ բերել Սամվել Կարապետյանի հետ համագործակցություն չհաջողած «Հայ ազգային կոնգրեսի» փաստացի առաջնորդ **Լեւոն Տեր-Պետրոսյանին**. «Մեր «կալիբրի» որեւէ երկրի ղեկավար չպետք է, ավելին, իրավունք չունի մտնել գերտերությունների գեոպոլիտիկ (աշխարհաքաղաքական) խաղերի մեջ: Չպետք է այնքան միամտություն ունենա, որ կարծի, թե կարող է գերտերություններից մեկին մի բան խոստանալ, իսկ մյուսին՝ մի այլ բան, ու այդ «խորամանկ քաղաքականության» շնորհիվ հասնել ինչ-որ հաջողության»:

Հա դե:

# Անվախ բազեի անմահ հոգին սլացավ երկինք

## *ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆԻ թարմ հիշատակին*

Ապրիլի 5-ին երկրային կյանքից հեռացել է՝ գրող, հասարակական-քաղաքական գործիչ Զորի Բալայանը։

Զորի Հայկի Բալայանը ծնվել է 1935 թվականի փետրվարի 10-ին, Ստեփանակերտում։ 1953-1957 թվականներին ծառայել է բալթիական նավատորմում։ 1963 թվականին ավարտել է Ռյազանի Ի. Պ. Պավլովի անվան բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը։ Հայ դատի եւ Արցախի հարցի արդար լուծմանը զինվորագրվել է 1960-1970թթ։ Իր հեղինակած «Օջախ» գրքում անդրադարձել է Հայաստանի, Նախիջեւանի եւ Արցախի թեմային, որի համար հարձակումների է ենթարկվել ոչ միայն թուրք-ադրբեջանական պատմաբանների, այլեւ ԼՂԻՄ մարզկոմի ադրբեջանամետ ղեկավարության կողմից։



Եղել է 1988 թվականին ծավալված ղարաբաղյան ազգային-ազատագրական շարժման ղեկավարներից ու գաղափարախոսներից մեկը։ 1988- 1991 թվականներին Միխայիլ Գորբաչովի, Ալեքսանդր Յակովլեւի եւ ԽՄԿԿ ԿԿ ու գործադիր իշխանությունների բարձրագույն այլ գործիչների հետ ունեցած հանդիպումների ժամանակ, ԽՍՀՄ պատգամավորների համագումարներում, Բորիս Ելցինին հղած նամակում ներկայացրել է արցախյան հիմնախնդիրը, ԼՂԻՄ-ում տեղի ունեցող ողբերգությունների հիմքերը, պանթուրքիզմի տարածման վտանգավորությունը, պատճառաբանված ու հիմնավորված ելույթներով դատապարտել Ադրբեջանի եւ Կենտրոնի կողմից կատարվող հակաօրինական, հակահայկական գործողությունները։ 1989 -1992թթ եղել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր։ 1990թ սեպտեմբերի 20-29-ին Մոսկվայում իր հյուրանոցային համարում հայտարարել է հացադուլ՝ բողոքելով «ԼՂ-ում տեղի ունեցող անօրինականությունների եւ Մ. Գորբաչովի անգործության դեմ» ու պահանջել, որ վերականգնվեն ԼՂԻՄ-ի իրավական-վարչական մարմինները, նրա սահմանադրական իրավունքները։

1992 -1995թթ եղել է ԼՂՀ Գերագույն խորհրդի պատգամավոր։ 1992- 1994թթ ակտիվ մասնակցություն է ունեցել ռազմաքաղաքական նշանակության հարցերի մշակման գործում, պարբերաբար եղել է ռազմաճակատի ամենաթեժ կետերում եւ իր ներկայությամբ ոգեւորել հայ զինվորին, որի համար ստացել է «Կոմիսար» պատվանունը։ Եղել է բազմաթիվ արտասահմանյան երկրների կողմից Արցախին ցույց տրվող մարդասիրական օգնության նախաձեռնողն ու կազմակերպիչը... Բայց այս ամենով հանդերձ նրա ամենամեծ առաքելությունը եղել է արցախյան ազգային- ազատագրական պայքարի միջազգայնացմանն ուղղված հիրավի նպատակասլաց գործունեությունը։ Իսկ դրա համար, ինչպես պատերազմի տարիներին, այնպես էլ հետպատերազմյան շրջանում նա օգտագործել է ոչ միայն միջազգային տարբեր հանդիպումների ու հրապարակային ելույթների ուժը, այլեւ «Կիլիկիա» եւ «Արմենիա» նավերով շուրջերկրյա ճանապարհորդություն կատարելու տարբերակը... Ճանապարհորդություն, որի ընթացքում նավերով օվկիանոսներն ու ծովերը հասնում է Արցախի պետական դրոշը վեր պարզած։

ՀԽՍՀ Պետական, ԽՍՀՄ լրագրողների միության Ն. Օստրովսկու անվան համամիութենական գրական մրցանակների դափնեկիր է։

2006 թվականի սեպտեմբերի 1-ին, ԼՂՀ նախագահի հրամանագրով, ԼՂՀ անկախության ձեռքբերման եւ ամրապնդման գործում մատուցած բացառիկ ծառայությունների համար Զորի Հայկի Բալայանն արժանացել է «Արցախի հերոս» ԼՂՀ բարձրագույն կոչման։

Զորի Բալայանի մահը խոր վիշտ է պատճառել իր ընտանիքին, ընկերներին, մտերիմներին, եւ նրան ճանաչողներին՝ Հայաստան, Արցախ, Սփյուռք։

Բնականաբար, այս տխուր լուրը համացանցում հայտնեց Զորի Բալայանի բժիշկ որդին՝ Հայկը. «Վաախ պապ ջան դու գնացիր անմիջապես Աստծո մոտ, Սուրբ հարության օրը, հոգիդ թող արծվի պես ազատ եւ խաղաղ ճախրի երկնքով!!!»։

Սիրելի Հայկ, փառք ու պատիվ հայրիկիդ, որ հայրենասիրությունն ու լավ որդի մեծացնելը իրեն համար լոկ խոսքեր չէին։

Պատահական չէր Վեհափառ Վազգեն առաջինի արտաբուխ խոսքը. «Ուզում եմ համբուրել Զորի Բալայանի ճակատն այն բանի համար, որ սովորեցնում է սիրել Հայրենիքը»։

**ԱՆԺԵԼԱ ՍԱՀԱԿՅԱՆ**
**ՓԱՐԻԶ, 07.04.2026թ.**

# Աննա Հեսս- Սարգսյան. «Իրանի դասը Հայաստանի համար՝ հույսդ քո վրա պիտի դնես»

⇨1

**-Հենց սկզբից TRIPP-ի մասին կարծիք կար, թե ԱՄՆ-ի հովանավորած այդ ուղին իրականություն չի դառնալու, քանի որ Հյուսիս-հարավն արդեն վերաշխուժացել էր։**

-Ես այդ կարծիքին չեմ։ Բայց կարեւոր է հասկանալ հետեւյալը՝ եթե աշխարհաքաղաքական գործոնները դեռ լուսաբանման կարոտ են, չի կարող որեւէ միջանցք կառուցվել։ Ինձ համար առավել կարեւոր հարց կա։ Մեղրիում էի 2025-ի տարեվերջին, մեկ տարվա բացակայությունից հետո։ Ի զարմանս տեսա, թե Հյուսիս- հարավի այդ մի մասը, ճանապարհային այդ ենթակառույցն ինչպես է ակտիվ կառուցվում։ Արդեն 2025-ի հունիսին Իրանի դեմ պատերազմ էր եղել։ Հարց առաջացավ՝ երկու թշնամի պետություն այստեղ ինչպե՞ս են փորձում զուգահեռ միջանցք կառուցել։ Իրանն արդեն դա անում է, իսկ TRIPP-ը թղթի վրա է։ Սա ինչպե՞ս է զուգահեռ ընթանալու։ Ինձ թվում է՝ պատերազմը դրա պատասխանը տվել է։ TRIPP-ը որպես տնտեսական ծրագիր վատը չէ։ Գաղափարը հետաքրքրական է, բայց թե՛ քաղաքական, թե՛ աշխարհագրական լուրջ, խնդրահարույց հարցեր կան, հետեւաբար այն միայն տնտեսական չէ։ TRIPP-ը հիմա սառեցվելու է, թղթի վրա է մնալու։ Միջնաժամկետ շատ բան է փոխվելու։ Հետաքրքրվեցի եւ հասկացա, որ այժմ էլ դեռ շարունակվում են Հյուսիս-հարավի՝ Իրանի կողմից կատարվող աշխատանքները, նույնիսկ պատերազմի ժամանակ չեն դադարել։

Մի քանի կարեւոր ուղերձ Հայաստանի հասարակության մտածող հատվածին կամ ՀՀ կառավարությանը. Հստակ է դառնում, թե որքան անվստահելի է Թրամփը, ԱՄՆ-ն՝ որպես գործընկեր, նույնքան, որքան ՌԴ-ն։ Երբ քննադատում են ՌԴ-ին՝ ասելով, թե վստահելի չէ, որն իհարկե ճիշտ է, նույնը ԱՄՆ-ն է։ Այս պատերազմը ցույց տվեց, որ ԱՄՆ-ն, հատկապես Թրամփի նախագահությամբ, բացարձակ վստահելի չէ։ Շատ հստակ երեւում է դա Ծոցի երկրների հանդեպ ԱՄՆ գործելակերպով, որ հրահրեց Իրանին հարձակվել այդ երկրների տարբեր բազաների վրա։ Հույս ունեմ, որ մեր հասարակությունն ու քաղաքական գործիչները տեսնում են, որ որեւէ գերտերություն վստահելի գործընկեր չէ, եթե իր շահերից չի բխում։ Նահանգների՝ որպես գերտերության այն մոտեցումը, թե իրենց շահերն ամենակարեւորն են, շատ հանգիստ իրենց գործընկերներին կարող են հանուն իրենց շահի զոհաբերել, տեսանք։ TRIPP-ի շրջանակներում, բնականաբար հասկանալի է, որ Թրամփի անունով երդում ուտելն ամենամեծ հիմարությունը պետք է լինի։ Կարեւոր դաս է նաեւ տեսնելը ցանկացած պայմանավորվածության, խաղաղության ցանկացած պայմանագրի փխրունությունը, երբ աշխարհաքաղաքական համատեքստը դրան չի նպաստում։

**-Տիկին Հեսս- Սարգսյան, կարելի՞ է գնահատել, թե այս պատերազմը, Իսրայելի գործոնով պայմանավորած, բաժանում է Ադրբեջան-Թուրքիա շահերը։ Այս պայմաններում Թուրքիան կբացի՞ ՀՀ-ի հետ սահմանը։**

- Կվարանեի միանշանակ գնահատել, ինձ համար շատ հստակ չէ, թե այդ շահերը բաժանվել են, դրանք շատ հոսուն են։ Գործընթացները դեռ հեղհեղուկ են, մեր խոսելուն զուգընթաց փոխվում են։ Ես սահմանի բացումը ուղիղ չեմ կապում դրա հետ։ Վերջնականացված տեքստի մեջ չեն։ Երկրորդ, երրորդական կապ՝ միգուցե, բայց առաջնային կապ չեմ տեսնում։ Սահմանը բացելու ուրիշ գործոններ էլ կան։ Հիմնականն ըստ իս կախված է ՀՀ-



Ադրբեջան պայմանագրի վերջնական ստորագրման բախտից։

**-Ո՞ր ուղին, երկիրն է Սյունիքի, հետեւաբար՝ ՀՀ-ի անվտանգության երաշխավորը։**

-Ուժեղ եւ ինքնաբավ Հայաստանը պիտի լինի երաշխավորը։ Այսօր մենք աշխարհաքաղաքական, ռազմաքաղաքական այնպիսի մի համատեքստի մեջ ենք, որտեղ որեւէ մեկի վրա հույս դնել չի լինում։ Միայն՝ սեփական ուժերին։ Իրանի դիրքորոշումը, ընթացող պատերազմը, այս ասիմետրիկ վիճակներում ցույց տվեց, թե որքան կարեւոր է, որ ինքդ քո համակարգի վրա դնես հույսդ։ Ըստ էության Իրանը մենակ է, դա հասկացել է Իրաքի դեմ պատերազմի ժամանակ ու հույսն իր համակարգի վրա է դրել։ Այդ համակարգն անհամաչափ է եղել Իսրայելի, ԱՄՆ-ի ռազմական, քաղաքական ներուժի համեմատ, մեծ է ուժային անհամաչափությունը, բայց Իրանը ցույց տվեց, որ կարող է դիմակայել, քանի որ ունի իր առանցքը, հույսն իր վրա է դրել։ ՀՀ-ն Իրան չէ, չունենք դարերով պետականություն կերտելու ռազմավարության, դիվանագիտության, ռազմական արվեստի, այդ բոլորի համադրումը, ցավոք, չունենք, բայց երեւույթն ինքնին լավ ուղերձ է՝ հույսդ քո վրա պիտի դնես, մնացածն էլ բալանսավորես։ Դաշինք կազմելը պիտի լինի ոչ թե օդային արժեքների, այլ՝ կոնկրետ հարցերի, խնդիրների հիման վրա։ Պատմաբան Թուկիդիդեսը «Մելոսյան երկխոսություն» աշխատությունում նկարագրել է այժմ մեր օրերում գործող ջունգլիների օրենքը, «երբ ուժեղներն անում են այն, ինչ կարողանում են, իսկ թույլերը ստիպված են լինում տառապել դրանից կամ զիջել, որքան կարող են»։

Հետեւաբար հույսդ քո վրա պիտի դնես, ոչ թե ուրիշների։ Իրանի դեմ պատերազմի դասերը մեզ համար շատ կարեւոր են։ Ոչ մի բանակցային գործընթաց երաշխիք չէ, որ քեզ վրա չեն հարձակվելու, եթե հակառակորդդ, թշնամիդ քաղաքական հաշվարկներ ունի եւ դրանք քաղաքական ճանապարհով չէ, այլ՝ ռազմականով է ուզում լուծել։ Ոչ մի դաշնակցային հարաբերություն հարատեւ չէ, վստահելի չէ։ Հույսդ քո վրա պիտի լինի միանշանակ։ Դաշնակիցներն էլ գալիս-գնում են, պիտի հասկանաս՝ ինչպես օգտագործես։ Իրանը ցույց տվեց, որ ասիմետրիկ ռազմական կարողություններով դիմադրել հնարավոր է, եթե ճիշտ ես գործածում քո ռեսուրսը։

**Հարցազրույցը վարեց**
**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ**
**Գերմանիա**

ՎԼԱԴԻՄԻՐ ԴԱՐԲԻՆՅԱՆ

Անվտանգության հարցերով փորձագետ

# Պատերազմը Իրանում շարունակվում է

## Վերջին հուսերը

Բենիամին Նեթանյահուի կառավարությունը իր նախորդ պատերազմը Իրանի դեմ սկսեց 2025թ. հունիսին: Այդ պատերազմը Իսրայելը նույնպես (ինչպես 2026թ. փետրվարի 28-ի պատերազմը) սկսեց «նպատակաուղղված սպանություններով»: Զոհերի մեծ մասը գտնվում էին իրենց տներում, եւ նրանց պահպանում էին «Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի («ԻՀՊԿ») հատուկ ջոկատայինները»: Այդ ժամանակահատվածում «ԻՀՊԿ» ղեկավարները, չգիտես ինչու, կարծում էին, որ «Մոսսադի» (Իսրայելի հետախուզությունը) գործակալները կհայտնվեն մոտոցիկլետներով եւ կգնդակահարեն պետության նշանավոր դեմքերին, ինչպես դա արեցին միջուկային գիտնականներին, որոշ ժամանակ առաջ:

Այդ պահապաններին արգելված էր օգտագործել հեռախոսներ կամ որեւէ էլեկտրոնային սարքեր, որպեսզի կանխարգելվեր նրանց գտնվելու վայրի տեղորոշումը:

Այնուամենայնիվ թիկնապահներից մեկը «Facebook» սոցիալական ցանցով հայտնել էր ինչ-որ մեկին իր հերթապահության վայրը: Այդ 12-օրյա պատերազմից հետո Իրանի իշխանությունները հրամայեցին թիկնապահների վրայից հանել տեղորոշման սարքերը:

Բայց ինչպես հայտնի դարձավ (ես գրել էի այդ մասին իմ նախորդ հոդվածում -«**ԱԶԳ**»-13-19 մարտ 2026թ.) Մոսսադին եւ ամերիկյան հետախուզությանը (ԿՀՎ) հաջողվել էր թափանցել Թեհրանի փողոցային տեսախցիկների ու բջջային կապի համացանց եւ հայտնաբերել էին պետության բարձրագույն ռազմական ու հոգեւոր ղեկավարության հանդիպման վայրը եւ ժամանակը:

Ինչպե՞ս պատահեց, որ նախկին պատերազմից (հունիս 2025թ.) 9 ամիս



Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի հետախուզության պետ, գեներալ-լեյտենանտ Սեյեդ Մաջիդ Խադեմի, զոհվել է 06.04.2026



Ղոլամռեզա Սոլեյմանի, «Բասիջ» աշխարհազորայինների հրամանատար, զոհվել է 17.03,2026

հետո (փետրվար 2026թ.) Իսրայելի հետախուզությանը հաջողվեց կիբեռ հաջողությունների հասնել 2-րդ պատերազմի սկզբին:

Իսրայելի հայտնի լրագրող **Ռոնեն Բերգմանը**, որ մասնագիտացած է հետախուզական գործողությունների ուղղությամբ, գրում է, որ Իսրայելի Զինված ուժերը եւ հատուկ ծառայությունները երկար տարիներ պատրաստվել էին այդ պատերազմին եւ հատկապես կիբեռ գործողություններին: Պատրաստվել պատերազմի, իհարկե չի նշանակում, պարզապես տեղեկատվություն հավաքել, այլ մշակել գործողությունների պլաններ նույնիսկ եթե ձախողումների թիվը ավելի մեծ է, քան հաջողությունները:

Վերջին ժամանակահատվածում Իսրայել-ԱՄՆ կոալիցիային հաջողվեց ֆիզիկապես վերացնել Իրանի 4 բարձրաստիճան ղեկավարների; Ալի Լարիջանիին (անվտանգության խորհրդի քարտուղարին), Ղոլամռեզա Սուլեյմանիին («Բասիզ» աշխարհազորի ղեկավարը), Էսմայիլ Հաթիբին (հետախուզության ղեկավար), Ալի Մոհամմեդ Նաինիին (ՀՀՊԿ - մամլո քարտուղար):

Եվ այսպես, Իսրայելի հատուկ ծառայություններին եւ ԶՈՒ-ին հաջողվել էր նախկինում ֆիզիկապես վերացնել նաեւ «Հեզբոլլա»-ի լիդեր Հասան Նասրալլային, նրա տեղակալ Ֆուադ Շուքրային եւ «ՀԱՄԱՍ»-ի ղեկավար Իսմայիլ Հանիին (վերջինիս վերացրին Թեհրանի հյուրանոցներից մեկում):

Իսկ ահա արդեն ապրիլի 6-ին, առավոտ կանուխ, Իսրայելի զինված ուժերին հաջողվեց սպանել նաեւ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի հետախուզության պետ Սեիդ Մոզիդա Խադեմիին:

Հետախուզության նախկին ղեկավարը՝ Մոհամմեդ Քազեմին, սպանվել էր 2025թ. հունիսի 15-ին (12 օրյա պատերազմի ընթացքում):

Նշեմ, որ բոլորովին վերջերս Խադեմին հայտարարել էր, որ Իսրայելին ինֆորմացիոն աջակցություն էին ցուցաբերել արտասահմանյան հատուկ 10 ծառայություններ:

Բերգմանը իր հոդվածներում նշում է, որ աշխարհին ավելի հայտնի է իհարկե «Մոսսադ» հետախուզական ինստիտուտը (այսպես են նրան անվանում Իսրայելում), սակայն պակաս կարեւոր հետախուզական աշխատանք չի տանում նաեւ «Շին Բեթը» - ռազմական հետախուզությունը: Կա նաեւ այսպես կոչված 8200 ստորաբաժանումը, որը զբաղվում է կիբեռպատերազմով, թվային հսկողությամբ (цифровая слежка - digital surveillance), տեղեկատվական տեխնոլոգիաներով եւ հեռախոսային խոսակցությունների հսկողությամբ (mass management of wiretaps - массовое управление прослушивания).

Պարզապես ընթերցողիս շատ չձանձրացնելու, բայց եւ այնպես հետաքրքրությունը գոհացնելու համար նշեմ, որ Իսրայելի հետախուզական կազմակերպությունները երկար ժամանակ ուսումնասիրել են (2000 կմ հեռավորությունից) Իրանի ռազմա-քաղաքական լիդերների թիկնապահների պրելակերպը, նիստ ու կացը ( life patterns - «образ жизни»), հասցեները, աշխատանքային օրակարգը, երթուղիները, մեքենաների կայանման վայրերը, անհրաժեշտ պահին նրանց «միջոցով» ղեկավարներին հայտնաբերելու համար:

Պարզապես ի գիտություն հայտնեմ, որ Իսրայելի մտերիմ եւ հավասարիմ դաշնակից Ադրբեջանը նույնպես կունենա այդ տեխնիկական հնարավորությունները:

Այսպես է հայտնաբերվել նաեւ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Լարիջանիի գիշերելու վայրը մարտի 16-ին (Թեհրանի ծայրամասերից մեկում): Օդուժի հարվածներից սպանվել է Լարիջանին եւ նրա որդիներից մեկը:

Իսրայելում այս նպատակաուղղված սպանությունները (չնայած դրանց անօրինականությանը եւ բացասական բարոյական կողմին) առաջացնում են հասարակության որոշակի շերտերում հպարտություն, վրեժխնդրության զգացում, բավարարվածություն:

Իմ կողմից նշեմ, որ հետախուզության (եւ լրտեսության) նման աշխատանքը առաջացնում է խառը զգացումներ՝ հիացմունքից մինչեւ զզվանք: Նայած հասկացության ո՞ր խավի մոտ, նայած թե ինչքա՞ն պատահական անձինք են զոհվում կամ տուժում գործողությունների ընթացքում, նայած թե այդ հասարակության հետախուզական կյանքում, կրթական համակարգում ի՞նչ տեղ են զբաղեցնում դետեկտիվ-լրտեսական ֆիլմերը, գրքերը, հեռուստասերիալները: Եվ, իհարկե, նայած թե հասարակությունը ի՞նչ կարծիք ունի իր երկրի հատուկ ծառայությունների մասին:

ԱՄՆ ԿՀՎ-ն (Կենտրոնական հետախուզության վարչություն) տնօրեն **Ջոն Ռեtկլիֆֆը**, սենատի հետախուզության կոմիտեի հերթական նիստին՝ նվիրված գլոբալ սպառնալիքներին (մարտի 18, 2026թ.) ելույթ ունեցավ եւ հայտարարեց, որ Իրանը Ռուսաստանից եւ Չինաստանից հետախուզական տեղեկատվություն է ստանում եւ այն օգտագործում ռազմական գործողությունների ընթացքում: Տնօրենը հայտարարեց, որ իր գաղտնի զեկույցում կնշվեն մանրամասներ այդ մասին:

Ընդ որում, ըստ որոշ տեղեկությունների, Ռուսաստանը չտրամադրեց Իրանին S-400 ՀՕՊ զենիթային համակարգեր, նախագահ **Թրամփի** հետ պայմանավորվածության արդյունքում:

Եվ այսպես, որքա՞ն կշարունակվի այս պատերազմը: Նախագահ Թրամփը հայտարարում է, որ ինքը եւ վարչապետ Նեթանյահուն միասին կորոշեն, թե ե՞րբ ավարտեն ներկա պատերազմը: Բայց Թրամփը արդեն երկրորդ անգամ է դիմում Իսրայելի կառավարությանը, որպեսզի դադարեցնեն Նեթանյահուի դեմ քրեական հետապնդումները: (Վերջինիս դեմ 3 քրեական գործեր կան հարուցված, այդ թվում՝ կաշառակերության համար): Դատը առայժմ կանգնեցված է, քանի Իսրայելում արտակարգ իրավիճակ է հայտարարված:

Միգուցե՞ սա է պատասխանը որքա՞ն կտեւի պատերազմը հարցին: Այնքան՝ քանի դեռ Նեթանյահուին դատելու վտանգը առկա է: Իսրայելի իրավաբանները գտնում են, որ դատը կարող է ձգձգվել 9-12 ամիս:

Թրամփը միեւնույն ժամանակ խստիվ պահանջում է անմիջապես բացել Հորմուզի նեղուցը՝ նեղ ջրային տարածքը Իրանի եւ Օմանի միջեւ, համաշխարհային կարեւոր առեւտրային երթուղին նավթի եւ բնական գազի համար:

Նշենք, որ ռազմական կոնֆլիկտը շարունակվում է արդեն 6 շաբաթ, էներգետիկ եւ վառելիքային ճգնումները թանկացնում են կյանքը ամբողջ աշխարհում:



Ալի Լարիջանի, Իրանի ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղար, զոհվել է 17.03.2026



սմայիլ Խաթիբ, Իրանի հետախուզական ծառայության պետ, զոհվել է 18.03.2026



Ալի Մոհհամադ Նաինի, ԻՀՊԿ = Իսլամական Հեղափոխության Պահապանների Կորպուսի խոսնակ, զոհվել է 20.03.2026

Ի՞նչ շահ ունի այս ամեն ինչում Ռուսաստանը: Նավթի եւ գազի գների բարձրացումը, իհարկե աշխատում է Ռուսաստանի տնտեսության օգտին, բայց, մյուս կողմից, ակնհայտ է, որ պատերազմական վիճակներում, Ռուսաստանի դաշնակիցները (որոնց թվում է նաեւ Իրանը) այնքան էլ չեն կարող հույս դնել Ռուսաստանի ռազմական օգնության վրա: Այո́, կա հետախուզական տվյալների տրամադրում, ռազմամթերքի եւ ռազմական տեխնիկայի տրամադրում (այդ թվում եւ ՀՕՊ S-300 զենիթային համակարգեր), բայց դա շատ քիչ է, երբ պատերազմ ես վարում ԱՄՆ-ի եւ Իսրայելի պես պետությունների դեմ: Օրինակի համար վերցնենք Ադրբեջան պետությունը, որին Հայաստանի եւ Արցախի դեմ պատերազմելիս ռեալ ռազմական օգնություն էին ցուցաբերում Թուրքիան, Պակիստանը, ահաբեկչական կազմակերպությունները, ինչպես նաեւ հենց նույն Իսրայելը:

⇨8

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

# Մենք էդ բանաձեւերից բան չենք հասկանում. ՀՀ վարչապետ

ՀՀ քաղաքացիների որոշակիից մինչեւ բացարձակ մեծամասնությունը Աստծո յուրաքանչյուր օրը սկսում է այն սպասումով, թե ե՞րբ իր օրը կընթանա որոշ բարեփոխումներով ու կենցաղի բարելավումներով: Ժամերը օրեր են դառնում, օրերը շաբաթներ ու ամիսներ, իսկ տեսանելի եւ ակնկալելի գրեթե ոչինչ չի կատարվում, որոնց շարքում հայտնվում են սովորական դարձած գնաճն ու անվտանգային հարցերը:

Երկրի տնտեսության աճի շուրջ իշխանական այրերի հրապարակած թվերն ու տոկոսներն այդպես էլ չեն հանգստացնում մեր մարդկանց, քանզի օրվա ընթացքում նրանք առնչվում են հարցերի ու խնդիրների, որոնք կարող էին չլինել իրենց միջավայրում, նոր հոգսերի հաղթահարման առիթ չդառնալ ու չհանդիսանալ, երբ մարդիկ լավի ու հաճելիի սպասումի են տրված: Իսկ ինչ է մերօրյա հայաստանաբնակի ուզածը. ընդամենն այն, որ տունը բավարար լուսավորված ու ջեռուցված լինի, սեղանին համեստ ուտեստներ լինեն, շքամուտքն ու բակը վերանորոգված ու մաքուր, տրանսպորտը հավերժական խցանումների ու փոսերի շրջանցման պատճառով չուշանա, աշխատավայրում էլ հաճելի միջավայր տիրի: Ավաղ, մեր օրերում ինչքան էլ փորձենք լավատեսության տրվել, այս պարզ ու հասարակ առօրյա հարաբերությունները աղճատվում են սպասվածից էլ անակնկալ: Հարցը ինչու՝ պատասխան ու պատասխանող չկա, եղածն էլ այնքան է անորոշ, որ միայն տարակուսանք է առաջացնում:

Հենց թեկուզ ՀՀ կառավարության օրերս կայացած նիստում հնչած խնդրի առումով, ուր քննարկվում էր երկրի էլեկտրաէներգետիկայի հարց: Աջից ձախ ու դիմացից թիկունք արված առաջարկությունների արդյունքում նիստը վարող վարչապետը հայտարարեց, որ «**Մենք կարող ենք էլեկտրաէներգետիկ առումով ինքնաբավ երկիր լինել**»: Թե որն է այդ ինքնաբավ լինելու ցուցիչը, նիստում տարօրինակորեն ոչինչ չասվեց: Մենք ասենք: ԱՄՆ-ում 1880-ականներից լույս տեսնող «Համաշխարհային փաստեր. 2024» տեղեկատուից պարզում ենք, որ ասենք Նորվեգիայում վերջին տարիներին մեկ բնակչի հաշվով տարեկան էլարտադրությունը կազմում է 30.000 կվտժամ, Կանադայում՝ 16.000 կվտժամ, Ֆինլանդիայում՝ 13.000 կվտժամ, եվրոպական մայրցամաքում միջինը 8-10-հազարական կվտժամ, ՀՀ-ում՝ ներկրվող ուրանի ու գազի արդյունքում 2.7 հազար կվտժամ: Թե քանի տասնամյակ կպահանջվի այս ցուցանիշը եռապատկելու համար, որեւէ մեկն ասել չի կարող, որի շուրջ որեւէ զրույց չծավալվեց հիշյալ նիստում: Այսուհանդերձ փորձ արվեց լավատեսության ինչ-որ զգացում առաջացնել, հանձին կառուցված 1140 մգվտ արեւային կայանների առումով, դրանք ներկայացնելով Մեծամորի ատոմակայանի 2.5-3 հզորություն: Ա-ն ասելուց հետո պետք էր Բ-ն ասել, որը ցավոք չասվեց: Արեւային կայաններն ունեն օգտակար գործողության սահմանափակումներ, որոնց ապացույցն են 2025 թվականին արտադրված 950 մլն կվտժամ ցուցանիշը, այն պարագայում, երբ Մեծամորի 410 մգվտ հզորությունն արտադրել է 2.6 մլրդ կվտժամ: Այնպես որ, ամենապարզ հաշվարկի արդյունքում ստացվում է, որ 950 մլն կվտժամն ու 2.5-3 ատոմակայանի հզորություններն անհամատեղելի են, ինքնախաբկանքի պես մի բան:

Համանման մի փաստ արդեն հիշատակված տեղեկատուում արձանագրում ենք ՀՀ համախառն ներքին արդյունքի, հանրահայտ ՀՆԱ-ի հետ կապված: Այն ներկայացվում է 52.7 մլրդ դոլար ցուցանիշով, 1 բնակչի հաշվով 18.9 հազար դոլարով: Ամերիկայի վիճակագիրներն այստեղ որեւէ առնչություն չունեն, քանզի նշվում է, որ թվերը ներկայացվում են ՀՀ Կառավարության կողմից: Պարզապես նշված գումարները հաշվառվում են հաշվի առնելով ՀՀ-ում ԱՄՆ դոլարի գնողունակության համարժեքության ցուցանիշը, որը 2001 թ.-ին հավասար է եղել 3.38-ի. Հայաստանում ԱՄՆ 1 դոլարն իր գնողունակությամբ համապատասխանում է 3.38 դոլարին ԱՄՆ-ում: Հիշենք, որ 2000-ականների սկզբին իրոք նման պատկեր ունեինք, երբ մսի կգ-ի արժեքը 1200 դրամ էր, պանիրը՝ 700 դրամ, կվտժամը՝ 15 դրամ, ուղեւորափոխադրումը՝ 50 դրամ, որոնք 2000-ականներին եռապատկվել ու քառապատկվել են: Իսկ ահա տեսեք թե ինչ գներ են ԱՄՆ-ի «Կրոգեր» սուպերմարկետում. ձկան պահածոն ՀՀ արժույթով 330 դրամ, լոլիկի կգ-ը 1800 դրամ, այն գներն են, ինչ առաջարկում են միշտ ցածր գներ խոստացող երեւանյան սուպերմարկետները. արքայախնձորը 3200 դրամ, 8 դոլար:




Հարցը, թե ինչքանո՞վ է տեղին նման լավատեսության սփռումը, հնչում է ինքնաբերաբար: Եթե նկատի ունենանք, որ տնտեսության հիմնական ու առաջնահերթ ոլորտներում իրավիճակը գրեթե ձախողումներ է հիշեցնում, անշուշտ նման աշխատաոճը որեւէ հիմնավորում չունի: Ասենք, պղնձահումքի սեփական արտադրության կազմակերպումը լինի թե բարեբեր հողերում սննդի ու կերերի նպատակով հացահատիկային մշակաբույսերի աճեցման հանդեպ վերաբերմունքը, այս ու բազում այլ ոլորտներում միայն անորոշություններ են, եթե այլ գնահատական չհնչեցնենք: Վարչապետն ինքը կառավարության նիստում հայտարարեց. ***Մենք էդ բանաձեւերից բան չենք հասկանում:***

Ուրիշ ի՞նչ հիշենք. թերեւս՝ Վիլյամ Սարոյանին, նրա՝ ***ինչ-որ տեղ ինչ-որ բան այն չէ*** խոսքերը: Մնացյալը մենք ենք, մեր յուրօրինակ առօրյայով:

# Պատերազմը Իրանում շարունակվում է

⇨7 Վերադառնանք մեր թեմային: Նույն Ռուսաստանին Ուկրաինայի դեմ պատերազմում Իրանի ամենառեալ օգնությունը այն էր, որ ամենակրիտիկական պահին Իրանը ՌԴ-ին տրամադրեց «Շահեդ» անօդաչու սարքերը, որոնք օգտագործելու համար ռուս մասնագետները արագ պատրաստվեցին Թեհրանում, ապա համապատասխան գործարան հիմնադրվեց Ռուսաստանում եւ, ամենակարեւորը, ՌԴ-ին իշխանությունները Իրանի օգնությամբ սովորեցին շրջանցել տնտեսական սանկցիաները:

Կարճ ամփոփում: ՌԴ-ի համար իրանական պատերազմը երկրորդական դեր ունի, առաջնահերթը Ուկրաինայի դեմ պատերազմն է, մինչ ԱՄՆ-ի համար ՌԴ-Ուկրաինա պատերազմը երկրորդական նշանակություն ունի: Առաջնահերթը Իրանի դեմ պատերազմն է: Այսպես ստեղծվում է ինչ-որ հավասարակշռություն: Բայց եւ նշենք մի կարեւոր հանգամանք եւս. ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Չինաստանի համար շատ կարեւոր է, որ Իրանում իշխանափոխություն չլինի, մինչդեռ իշխանափոխությունը շատ կարեւոր է Իսրայելի եւ ԱՄՆ-ի համար:

Ինչպես նշում է նախկին խորհրդային հետախույզ, այժմ անկախ քաղաքական վերլուծաբան (բնակվում է ԱՄՆ-ում) **Յուրի Շվեցը**, այս պահին կարեւորն այն չէ, ով շատ հրթիռ եւ դրոն կարող է օգտագործել ռազմական կոնֆլիկտում, այլ կարեւոր է ով հնարավորություն ունի հարցեր լուծել Հորմուզի ջրանցքով նավթ, գազ, պարարտանյութեր եւ հելիում անցկացնելու գործում: Իսկ այդ միակ պետությունը այս պահին Չինաստանն է:

Եվ այսպես, աշխարհաքաղաքականության մեջ վակուում չի լինում: Հեռանում է ինչ-որ մի ուժ, նրա տեղը անմիջապես զբաղեցնում է մեկ ուրիշը:

Վերադառնանք մեր իրականությանը: Եթե Իրանը պարտվի (Աստված մի արասցե), տարածաշրջանում այդ պետությունը չի կարող այլեւս լինել կանխարգելիչ գործոն: Ուժի մեջ կմտնի թուրքական աղեղը (турецкая дуга - Turkish arc): Թուրքիան եւ Ադրբեջանը «գործելու» ազատություն են ստանում, քանի որ Ռուսաստանն էլ շատ խառը վիճակում է եւ թե ե՞րբ կավարտվի այդ պատերազմը՝ նույնպես չի երեւում: Եվ իհարկե, վերոհիշյալ 2 պետությունները կպահանջեն այսպես կոչված էքստերիտորիալ միջանցքը Սյունիքի տարածքով (40 լմ):

Սյունիքի բնակչությունը մոտավորապես 130.000 է, տարածքը՝ 4000 քկ: Եթե այս տարածքը դառնա էքստերիտորիալ, ապա Սյունիքը գրեթե կհայտնվի կիսամեկուսացված վիճակում: Իսկ Նախիջեւանը այս պարագայում, մեկուսացված անկլավից (500.000 բնակչությամբ) դառնում է հաստատուն «կամուրջ» Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ:

Իրանի առեւտրի ամենախոշոր գործընկերներից մեկը Չինաստանն է: Եթե Իրանը պարտվի եւ տեղի ունենա իշխանափոխություն (հուսանք, որ չի պատահի դա) Չինաստանը կորցնում է մի կարեւոր օղակ «Մեկ գոտի - մեկ ճանապարհ» նախագծում: Եթե նախագծի այս օղակը փակվի, բեռները Չինաստանից Եվրոպա պետք է անցնեն Կենտրոնական Ասիայով, Կասպից ծովով, Հարավային Կովկասով, այնուհետեւ Սեւ ծովով, այսպես կոչված «միջին միջանցքով»: Հայաստանը նույնպես կարող է այդ նախագծի մաս դառնալ:

Բայց մի բան էլ հաշվի առնենք: Հայաստանը մի երկիր է, որ սահմանակցում է Իրանի հետ, բայց միեւնույն ժամանակ գործընկեր է Արեւմուտքի հետ, Չինաստանի, Ռուսաստանի եւ նշենք՝ Հնդկաստանի հետ:

Հնդկաստանի աշխարհի առաջատար լիդերներից մեկն է IT - Outsourcing բիզնեսում (դա ընկերությունների տեղեկատվական սպասարկում է): Բացի այդ, Հնդկաստանին հարկավոր է դաշնակից Հարավային Կովկասում, իսկ դա կարող է լինել Հայաստանը: Այն զինատեսակները, որ Հնդկաստանը տրամադրում է Հայաստանին («Պինակա», «Աքաշ», «Աթաքս»), նախազգուշացում է «Ադրբեջան-Թուրքիա-Պակիստան-Իսրայել» կոալիցիային - «Հայաստանը ունի ռազմաքաղաքական հովանավոր»: Չմոռանանք նաեւ մեր մյուս հարեւան՝ Վրաստանի մասին, դա մեր միակ ճանապարհն է դեպի Սեւ ծով (Բաթումի, Փոթի): Այս ճանապարհով է գնում Հայաստանի արտահանումն ու ներմուծումը (экспорт - импорт): Ցավոք տրտի Վրաստանը իդեալական գործընկեր չէ Հայաստանի համար:

Չմոռանանք նշել, որ Պակիստանը կարեւորագույն դեր է խաղում իրանական ռազմական կոնֆլիկտը կանգնեցնելու գործում: Գոյություն ունի հրադադարի 15 կետ, որոնք առաջարկել է Թրամփը, բայց Իրանը առայժմ չի ընդունել դրանք:

Պատերազմը Իրանում բարդություններ է ստեղծում Հայաստանի համար, օր. Բենդեր-Աբբաս նավահանգստում կուտակվել են չբեռնաթափված հայկական ապրանքներ, որոշ համաստեղ նախագծի իրականացումը վտանգի տակ է, օրինակ՝ 32 կմ ճանապարհը (Ագարակ-Քաջարան) կառուցումը, էլեկտրոհաղորդակցման երրորդ գիծը եւ այլն: Հայտնի չէ նաեւ ինչո՞վ կվերջանա «TRIPP» նախագիծը:

Մի խոսքով, այս պատերազմը Հայաստանին ոչ մի լավ բան չի խոստանում:

Առաջ էլ եմ գրել, հիմա էլ կրկնում եմ. Հայաստանին հարկավոր է՝

1. Ուժեղ ժամանակակից ռազմական տեխնիկայով զինված բանակ
2. Ուժեղ հատուկ ծառայություններ, հակահետախուզության եւ հետախուզության արհեստավարժ կադրերով:
3. Ներկա իրադրությունը ճիշտ վերլուծող եւ ապագան կանխատեսող ուժեղ դիվանագիտություն:
4. Ներքին կայուն իրավիճակ Հայաստանում:

Իրանին մաղթենք դիմացկունություն...

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԵ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60